

ԿԱԼՏՆՏԵՍՈԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Հ Ա Խ Հ ՏՈՂՔՈՂԿՈՒՏԱ - ՎՆԱՍԱՌՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԿՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐՈՌ ԲԱԺԻՆ

Դ. ԲՈԲՈՅԱՆ
Վ. ԳՈՒԼՔԱՆՑԱՆ
Զ. ՍՈՒԶՅԱՆ

ՀԱՅԱԲՈՒՅԱՆԵՐԻ ՄՐՒԿԸ

ԳՅՈՒՂՂՐԱՑ ՅԵՐԵՎԱՆ 1936 •

ԿՈՏՏԵՏԵՍԱԿԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Դ. ԲԱԲԱՅԱՆ
Վ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ
Զ. ՍՈՒԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՆՈՒԹԻՒՆ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՅՈՒՐԻ ՊԱՇՏՈՆԱԿՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԵՎԱԾՈՒԱԿԱ ԿԱՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ)

卷之三

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր սոցիալիստական գյուղատնտեսությունը տալիս է հըս-
լայական հնարավորություններ՝ արդյունավետ կերպով պայքա-
րելու գյուղատնտեսական բուսերի զանազան հիմնդությունների և վնասատունների դեմ ու չեղոքացնելու և անզգալի դարձ-
նելու նրանց հասցրած տնտեսական վնասը: Ցեվ իրոք, բավակա-
նին մեծ են մեր նվազումներն այս բնագավառում: Սակայն ցան-
կալի արդյունքները, վորոնց ստանալու հնարավորություն ունենք
մենք, քիչ են դեռևս: Մեր գյուղատնտեսությանը տակավին շա-
րունակում են վնասել բույսերի հիվանդություններն ու վնասա-
տունները, վորոնց մեջ նաև հացարույսերի մրիկ կոչվող հիվան-
դությունը: Իսկ սա անհանդուրժելի յէ. մրիկը գոյություն չպի-
տի ունենա մեր սոցիալիստական դաշտերում և չպետք է պակ-
սեցնի նրանց բերքատվությունը: Պետք ե ամեն կերպ պայքա-
րել վոր կուսակցության առաջադրանքը՝ ազգաբնակության ա-
պահովումն սպասման հիմնական ապրանքներով՝ վորոնց թվում
նաև մննդամթերքներով, յերկրորդ հնգամյակի վերջում, համե-
մատած առաջին հնգամյակի վերջի հետ, ավելանա վոչ պա-
կաս, քան 2—3 տնգամ: Ընկ. Սոլոտովը կուսակցության 17-րդ
համագումարում ասաց, վոր հացարույսերի բերքատվությունը
յերկրորդ հնգամյակում, համեմատած առաջին հնգամյակի հետ,
պիտի բարձրանա 33%՝ Հանճարեղ առաջնորդ ընկ. Ստալինն
առաջադրու կոմբայնավարների և կոմբայնավարուհիների խորհր-
դակցությունում, 1935 թվի գեկտեմբերի 1-ին արտասանած իր
հառում առաջադրեց հսկայական նշանակություն ունեցող հե-
տելայի խնդիրը:

«Եյս տարի մենք հավաքել ենք ավելի քան հինգեկեն միլիոնդ փութ
հացահատիքի: Սա միանգամայն բավականացնում ե, զորպեսզի կուշտ
կերակրենք ընակչությանը և գեռ ամեն անուազ չնախատեսված գեպեն-
քի համար անհրաժեշտ բավարար չափով պաշար ել յետ դնենք: Այս,



11-280679

ի հարկե, վաս չե այսորվա համար: Բայց մենք չենք կարող սահմանա-
ռ փակել միայն այսորվա որով:

Մենք պետք ե մտածենք նաև վաղվա որվա մասին, մոտակուտ ապագայի
մասին իսկ յեթե զործին նայենք վաղվա որվա տեսակետից, ապա ձեռք
բերած արդյունքները մեղ չեն կարող բավարարել: Մեղ ինչը ան հացա-
հատիկ հարկավոր կլինի մոտալուտ ապագայում, ասենք՝ մի յերեք-շաբա-
տարի հետո: Մեղ հարկավոր կլինի 7—8 միլիլիտր փութ հացահատիկ: Ահա
այս ե գործի զրությունը, բնկերներ, հետեւքար մենք պետք ե արդեն
իսկ այժմ միջոցներ ձեռք առնենք, զորպեսզի հացահատիկ արտազրու-
թյունը մեղ մոտ լիովին աճի տարեցարի և գորգեսզի այդ ժամկետին
մենք մէտնգամայն պատրաստ լինենք այս կարեւը տեսչուն խնդրի բրա-
գործան համար:

Ուրեմն, անհրաժեշտ ե ել ավելի ուժեղացնել պայքարը հա-
ցարույսերի այդ հիվանդության՝ մրիկի դեմ:

Մեր կուսակցության Անդրյաներկոմը 1935 թվի աշնանացանի
մասին ընդունած իր վորոշումներում առաջադրել ե հարյուր տոռ-
կոսով ախտահանել հացարույսերի սերմացուն այն շրջաններում,
վորտեղ հետազոտությունը յերեան ե բերել, թե հացարույսերը
վարակված են մրիկով:

Մեր կուտնահսկական զյուղացիության ակտիվության և կուլ-
տուրականության արագ աճումը հնարավորություն ե տալիս
ավելի բարձր հիմքերի վրա դնելու պայքարի զործը հացարույ-
սերի մրիկի դեմ: Խոշոր սոցիալիստական զյուղատնտեսության
պայմաններում այդ պայքարը կարող ե տալ և անպայման
պետք ե տա միանգամայն դրական արդյունքներ: Բայց դրա
համար պահանջվում ե լավ ճանաչել մրիկ հիվանդության առանձ-
նահատկությունները, լավ գիտենալ մրիկի զարգացման ու տա-
րածման յեղանակը, և դրա հիման վրա՝ կաղմակերպել պայքարը
մրիկի դեմ:

Մրիկի դեմ մղվող պայքարում խոշոր գեր ունի խաղալու
համապատասխան հանրամատչելի գրականությունը, վորը պետք
ե ողնության հասնի արտադրության հետ անմիջականորեն կապ-
ված մեր գյուղատնտեսներին, կուտնահսությունների բրիդագիր-
ներին ու ակտիվին՝ կողմակերպելու և միջոցառումների սիս-
տեմի վերածելու մրիկի դեմ մղվող պայքարը և տիրապետելու
այդ պայքարի տեխնիկային:

Ահա այս պայքարին ոժանդակելու համար ե գրիկ այս
գրքույթը:

Դրանույթի I և IV գլուխները գրել ե Վ. Գուլքանյանը, II և
III գլուխները՝ Դ. Բաբայանը և V գլուխը՝ Զ. Սուջյանը:

ԴՐԱՄԻԱ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՐԻԿ ԳԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՌ ՏԵՏԵՍՎԱԾ ՎՆԱՍ

Հացարույսերի մրիկ հիվանդությունը տարածված ե յերկ-
ըագնդի բոլոր անկյուններում, ուր մշակում են հացարույսեր,
և ամենուրեք ահագին վնասներ ե հասցնում: Այսպես, որինակ՝
Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1919, 1920, 1921, 1922,
1923 և 1924 թվականներին մրիկը միջին չափով հասցըել ե
100 միլիոն դոլարի վաս: Իլլուսոյս նահանգում 1923 թվին մրիկը
հասցըել ե 2375000 դոլարի վաս: Կանադայում 1920, 1921, 1922,
և 1923 թվականներին մրիկը հասցըել ե տարեկան 1283100 դոլ-
լարի վաս, վորն ըստ կուլտուրաների արտահայտվում ե հետեւյալ
կերպ.

- | | | |
|-----------------------------|-------------|-----------|
| 1. ցորենից | 3, 980, 000 | դոլար վաս |
| 2. գարուց | 1, 102, 000 | » » |
| 3. վարսակից | 6, 773, 000 | » » |
| 4. յեգիպտացորենից | 976, 000 | » » |

Այս թվերը ցույց են տալիս, թե վորքան մեծ ե մրիկի հասց-
ըած վասը հիշած վայրերում: Յեթե կանադայում ստացված
վասը տոկոսների վերածենք, կտանանք հետեւյալ պատկերը.

- | | |
|---|--------|
| 1. ցորենից մրիկը վոչնչացըել ե | 1, 2 % |
| 2. գարուց » | 3 » |
| 3. վարսակից » | 3, 4 » |
| 4. յեգիպտա-
ցորենից » | 2 » |

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, անգամ այն ժամանակ, յեր-

ամենայնիվ ստացվում ե ահագին վնաս: Բանն այն է, վոր կառնագայում 1900 թվականներին մրիկը հասցըրել ե վոչ թե 3-4, այլ 30-40 տոկոս վնաս: Մրիկի գեմ կազմակերպած ուժեղ պայքարի միջոցով 20-30 տարվա ընթացքում այս ահագին վնասն այնտեղ աստիճանաբար նվազեցըրել են:

Ապանձնապես մեծ ե լինում մըրկի վկամ այն ժամանակ,
յերբ աչքաթող ե արվում պայքարը մըրկի դեմ. այսպես, որի-
նակ՝ Գերմանիայում 1916 և 1917 թվականներին, հիշած պատ-
ճառով, հացաբույսերի փոշեմքրիկը վարտենի ցոքենի ցանքերի
30, իսկ տեղատեղ 50 և անգամ 70 տոկոսը: Զարխաղանց մեծ եք
մըրկի հասցրած վնասը՝ ցարական Ռուսաստանում, վարտենի հա-
ցաբույսերի ցանքերի վարակվածությունը մըրկով համում եք
40, 50, 70 տոկոսի: Յեկ դա սովորական յերեւյթ եք: Ցարական
Ռուսաստանը մըրկի դեմ պայքար չկազմակերպելու պատճառով
տարեկան կորցնում եք մի քանի տասնյակ միլիոն ցենտներ հա-
ցահատիկ:

Մըիկը մեծ վասա և հասցնում նաև Խորհրդային Միության գյուղատնտեսությանը: Թեև մեծ են մեր նվաճումները մըիկի դեմ մղվագ պայքարում, բայց, այնուամենայնիվ, մեր Միության առանձին շրջաններում մըիկը հասցըել և չոչափելի վեսա, Ալապես, որինակ՝ 1920, 1921 և 1922 թվականներին Խարկովի մարզի զանազան շրջաններում հացաբույսերի տարեկան միջին վարակվածությունը մըիկով արտահանվում եր հետեւալ կերպ:

1. գարնան ցորեն	20,5 %
2. վարսակ	16,5 >
3. գարի	4,9 >
4. կանեփ	12,3 >

Մրիկը վորոշ տարիներ սաստիկ վնաս և հասցել է հենիս-
գրադի մարզում, Վորոնեժում, Տամբովում և այլն։ ԲՄՖԽՀ-ի
մշկին տարեկան վնասը մրիկից հասնում էր 172 միլ. ռուբլու։
1927 թվին Խորհրդային Միությունը մրիկի պատճառով ստացել
է 622,850,000 ռուբլու վնաս։ Մեծ եր մեր լերկրի ստացած վնասը
նաև 1932 թվին, լերը մրիկը խից մեղանից 18,445,000 ցենտներ
հացահատիկ։ Այս կորուստն ըստ առանձին հացարույսերի բաշխ-
վում է հետեւայ կերպ։

1. աշխան յորբն	1,313,000	յեհաներ
2. գարնան	5,771,000	»
3. գարի	1,442,000	»
4. աշուա	457,000	»
5. վարսակ	3,056,000	»
6. կօրեկի	1,406,000	»

Քիչ միաս չի հասցնում մըիկը նաև մեղ մոտ՝ Խորէրդային
Հայաստանում, ուր նա բավականին տաքածված եւ կ վարակում
եւ հացարույսերի ցանքերը։ Մըիկը գլխավորապես տարածված եւ
Հայաստանի նախալեռնային ու լեռնային շրջաններում, վորը բա-
ցատրվում եւ մըիկի բիորդիայով (տես այս գըքուկկի Ա գլուխը՝
«Մըիկի բիորդիան»)։ Բայց մըիկի տարածումը մեղ մոտ, ինչ-
պես հարկն եւ, ուսումնասիրված չեւ և վորոշակի հայտնի չեւ, թե
ինչքան եւ միաս հասցնում նա մեր հացահատիկային տնտեսու-
թյանը։ Անկասկած եւ, վոր կարիք կա հատուկ ուսումնասիրու-
թյան յենթարկելու մըիկի տաքածումը մեղ մոտ՝ ըստ տարբեր
զնաների և մակարդակութանքերի։

Մըիկի վերաբերյալ կատարած մեր գիտողությունները
թույլ են տալիս՝ մեզ ասելու հետեւյալը. — մեզ մոտ՝ Հայստանում
քարամը իրի ը տարածված է ավելի շատ, քան փոշեմբիկը. Քարա-
մը իրի ը տարածված է բոլոր նախալեռնային և լեռնային շրջաննե-
րում. Քարամը իրից սաստիկ տուժում են Ալլահի վերդու, իջևանի,
Շամշադինի, Դիլիջանի, Կիրովականի, Ապարանի, Բասարգեչարի
և այլ շրջանները. Փոշեմբիկը համեմատաբար շատ է տարածված
լեռնային շրջաններում, որինակ՝ Կիրովականի, Ստեփանավանի,
Դիլիջանի, Ախտայի, Մարտունու, Բասարգեչարի, Բայազետի և
Ապարանի շրջանների մի քանի բարձրադիր մասերում. Յեկ պետք
է ասել, զոր փոշեմբիկը մեր գարու ցանքերում ավելի լե տարած-
ված, քան զորեւնի ցանքերում.

Քարամրիկով և փոխարիկով վարակված են մեր հացաբույ-
սերի ցանքերի մոտ 85 % -ը, վորոնց վարակման աստիճանը, մի-
ջին չափով, 7 % -ից պակաս չէ: Ուրեմն, 1934 թվին մեր հացաբույ-
սերի մոտ 350,000 հեկտար ցանքերից մրիկով վարակված եր
297,500 հեկտարը: Ցեղե ընդունենք, վոր մրիկը իրեն, վոչնչաց-
րել և 297,500 հեկտար ցանքի բերքի 7 % -ը, ապա դուռս կդա,
վոր 1934 թվին ունեցել ենք 124,950-ից մինչև 166,600 ցենտներ
հացահատիկի կորուստ: Համենայն դեպք, մրիկի պատճառած վնասը
մեր տնտեսությանը պահանջ չէ սրանից:

Սրբկի պատճռով պակսում ե զոչ միայն հատիկի, այլև
կերպ՝ հարդի քանակը: Յեվ սա հասկանալի յե, փորոշնետե բուշ-
սի արմատներն ու տերեւները կարող են այնքան նյութեր հավա-
քել հողից և ոդից, փոր բավարարի ու ապահովի բույսի նորմալ
գարգացումը, աճեցողությունը և պառեղ տալը: Բայց, քանի փոր
բույսի հաջողին ապրում ու զարգանում ե նաև մրիկը, ալդ պատ-
ճռով բույսը մնում է նիւազ:

Այս բանն ապացուցվում է մի շարք գիտնականների կատարած փորձերով, վորոնց մասին բերում ենք մի քանի թվեր:

Առողջ լեզվ մրիկով վարակված հացաբույսերի ցողունների լերկացությունը:

Կուտառության մասնակից բույսի ցողունների յերկարությունը սանտիմետրներով	Մրիկով վարակված բույսի ցողունների կարությունը սանտիմետրներով	Տարբերություն
1. Ցորեն	84	74
2. Աղոթա	133	124
3. Կոբեկ	79	56
		23

Ահա այս թվերը պարզ ցույց են տալիս, վոր մրիկով հիվանդ հացաբույսերի ցողունների յերկարությունը, համեմատած առողջների հետ, զգալի պակասում է: Բացի ցողունների յերկարությունից, նվազում է և հաստությունը. այսպիսով պակասում են նաև հարդի քանակը:

Մրիկով վարակված և չվարակված դարու ծիլերի յերկարությունը.

Առողջ ծիլերինը		Վարակված ծիլերինը	
3 սանտ. մարձր	2 սանտ. մածր	3 սանտ. մարձր	2 սանտ. մածր
15,8%	12,1%	0,0%	26,0%

Այս թվերից պարզ յերևում է, վոր ծիլերը մրիկով վարակված լինելու հետևանքով ունենում են նվազ աճեցողություն:

Մրիկով վարակված հացաբույսերի արմատները նույնականացնելու են աճում, նրանց մասսան քիչ և լինում և կրիուլ նորմալից ցածր—մոտ 22% ունի:

Այսպիսով, տեսնում ենք, վոր մրիկի ազդեցության հետեւ վանքով ճնշվում է ցորենի, դարու, աշորայի, կորեկի և առասարակ բոլոր հացաբույսերի աճեցողությունն ու պակասում նրանց բերքատվությունը:

Մրիկով վարակված լինելու հետևանքով ընկնում է նաև հացաբույսերի սերմերի ծլունակությունը. Որինակ.

Մրիկով չվարակված դարու ծլունակությունը	62,2 %
» վարակված » »	51,0 »
» չվարակված կորեկի » »	70,9 »
» վարակված » »	63,6 »

Մրիկը պակսեցնում է հացաբույսերի բերքատվությունը և մի այլ ճանապարհով. բանը նա յե, վոր մրիկը թեև գտնվում է աճող բույսի որգանիզմի մեջ, բայց յերեխն աճնքան աճել ու զարգանալ չի կարողանում, վորպեսզի կարողանա սպորներ տալ: Այս գեղքում վարակված հացաբույսը տալիս են նվազ հատիկներ, վորի հետևանքով պարզ ե, նույնպես պակսում և և բերքը:

Բերքի քանակը պակսելուց զատ, ընկնում են նաև նրա վորակը: Մրիկով վարակված հատիկներից ստացված ալյուրը լինում է վոչ սովորական սպիտակ, նորմալ գույնի. ունենում է անախոքթ համ ու հոտ և նրանից պատրաստած հացը լինում ե շատ ցածր վորակի: Այսպիսի հացը վնասակար ու անպետք չե, կարելի յե ուտել, բայց նա լիստիք չե այն պատճառով, վոր պարունակում ե իր մեջ ուտելու համար միանգամայն անպետք մրիկ: Հարդի վորակը նույնական լինում է, և չափազանց շատ վարակված հացաբույսերից ստացված հարդը կարող ե վատ ազդել կենդանիների մարսողության վրա, բայց ավելի վնաս պատճառել չի կարող, քանի վոր մրիկի սպորներն իրենց քիմիկական կազմով թունավոր չեն:

Այսպիսով պարզ ե, վոր մրիկը մեզ համար մեծ չարիք ե և ահազին վնասներ և հասցնում մեր սոցիալիստական գյուղատեղական մրիկի դեմ և այնպես խնել, վոր այդ պայշտարը մինի խելացի, մոռածված, բարձրորակ, այլապես նա դրական արդյունք տալ չի կարող:

Մեզ մոտ, Խորհրդային Ֆիությունում, ուժեղ պայշտար և մրիկում մրիկի դեմ: Այդ պայշտարն առանձնապես ուժեղ գարձակ 1927—28 թվականներին, մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման զուգընթաց: Որինակ՝ յեթե մինչև 1927—28 թիվը մեր ցանքերի մրիկով վարակվածության աստիճանը պակաս չեր 18% ունի և տեղական ու տարի առ տարի համարում եր 20—30 տոկոսի, ապա 1927—28 թվականից հետո նա արագությամբ ընկալ և այժմ, միութենական մասշտաբով, միջին չափով ավելի չե 3 տոկոսից: Բայց բանը նա յե, վոր 3% ունի քիչ չե: Այսքանն ել բավական ե, վորպեսզի մեր սոցիալիստական հայրենիքը միլիոններով վնաս ստանա: Բացի այս, մեր Միության մի շարք շրջաններում, վորոնց թվում նաև Խորհրդային Հայաստանում բավականին բարձր և մրիկի տարածման չափը: Այսինչ մեր հնարավորություններն այնպիսին են, վոր կարելի

յե ամբողջովին վերացնել մրիկից ստացվող տնտեսական վնասը։
Ծիայն թե պետք ե ազբուաեխնիկայի կանոնների համաձայն
մշակել հողը, լավ սերմացու ընտրել, լավ զտել և ախտահանել
սերմացուն, խնամքով կատարել ցանքը, վոչնչացնել մոլախոռնե-
րը և այսպիսով առաստեղով առատ բերք, թույլ չտար, վոր
մրիկը պակսեցնի այդ բերքը։

Միշտ հիշենք, վոր լերկորդ հնգամյակում գյուղատնտեսու-
թյան զիվավոր խնդիրը բերքատվության բարձրացումն և, վորի
հետ սերտորեն կապված է հակամքիկային պայքարը։

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Մ Ր Ի Կ Ի Բ Ի Ռ Ո Լ Ո Գ Ի Ա Ն

Մրիկը սնկավին հիվանդություն և, վոր առաջանում է միկ-
րոսկոպիկ մանր սնկերից. վերջններս զարգանում են բուսե-
րի վրա և վեր են ածում նրա առանձին որգանները ու մրի-
տեսք ունեցող փոշու. Մրիկային հիվանդություն առաջացնող բո-
լոր սնկերը մանում են միենուն ընտանիքի մեջ (Ustilaginaceae):
Մրիկային բոլոր սնկերն իրենց բիոլոգիատվ միմյանց հետ շատ
ընդհանուր բան ունեն, ուստի, նախքան առանձին հացահատիկ-
ների մրիկային հիվանդությունների նկարագրությանն անց-
նելը, անհրաժեշտ է համառոտակի ծանոթանալ մրիկային սընկե-
րի բիոլոգիայի առանձնահատկությունների հետ։ Այդ սընկերն
առանձնապես վնասում են հացահատիկներին։ Մրիկային սնկերի
յուրաքանչյուր առանձին տեսակը սովորաբար վոչնչացնում է
բուսի մի փորոշ մասը՝ միայն. որինակ՝ հատիկը կամ ամբողջ
հասկը, վորոնք վեր են ածվում ու փոշու. բացի որանցից, լի-
նում են գեղքեր, լերբ վոչնչանում են նաև բույսի փորոշ մասե-
րը. որինակ՝ ցողունը, տերեները, տերեի կոթունները, լերենն
արմատները, փոշանոթները և այլն։ Մրիկային սնկերի մաք-
մինը, ինչպես բոլոր սնկերինը, կազմված է նուրբ բազմաբջիջ
անգույն թելիկներից, վորոնք կոչվում են միցելիումներ։ Այդ
միցելային թելիկները թափանցում են բույսի հյուսվածքների
մեջ և յերկար ժամանակ, յերբեմն մինչև վեգետացիալի վերջը,
մնում են միանգամայն աննկատելի, այնպես, վոր վարակված
բույսերն արտաքուստ վոչնչով չեն տարբերվում առողջ բույ-
սերից։

Զարգացման վորոշ ստաղիալի հասնելուց հետո, միցելիում՝ ները կազմում են հաստաթաղանթ բջիջներ, վորոնք կոչվում են սպորներ, և վորոնց միջոցով բազմանում է սունկը: Հացահատիկների մրիկի սպորների ձեփակերպվելը մեծ մասամբ զուգադիպում է հացահատիկների հասունացմանը: Սպորները սնկի միցելիում մից առաջացող շատ ժամը, պինդ ու սեռավուն թաղանթով ժամկիած բջիջներ են, վորոնք բոլորովին մեկուսացված են միջյանցից: Նրանցից ել կազմված ե այն սե փոշին, վոր մենք նկատում ենք բույսի վարակված որգաններում:

Սպորները միցելիումից առաջանում են հետեւյալ կերպ.

Միցելիումների թելիկներում կազմվում են մեծ քանակությամբ ընդլացնական միջնապատեր և, այսպիսով, լուրաքանչյուր, թելիկ բաժանվում է բազմաթիվ առանձին մասերի: Այդ մասերից յուրաքանչյուրի վրա առաջանում է հաստ, մուգ թաղանթ, ապա առանձին սպորները բոլորովին զատվում են միջանցից:

Արտաքին մուգ թաղանթի տակ լինում է յերկրորդ բարձր, հարթ և անգույն ներքին թաղանթը: Սպորները հասունանալով, ցրվում են զանազան միջոցներով և, ընկնելով բարենպաստ պայմանների մեջ, ծլում են:

Վոր բոլոր տեսակի մրիկալին սնկերի սպորներն են, վոր հասունանալուց հետո անմիջապես կարողանում են ծլել:

Հատ տիպի մրիկների սպորները ծլում են հանդսափ վորոշ շրջանից հետո. մեծ մասամբ մի քանի ամիս անց: Յեթե ծլելու համար պայմաններն անբարեհաջող են, ապա սպորների ծլունակությունը յերբեմն կարող է պահպանվել մի քանի տարի:

Ինչպես են ծլում սպարեները.—Սպորի հաստ թաղանթն ուռչում ե և պատովում: Սպորի պարունակությունը դուրս ե գուլիս փոքրիկ ծիլի ձևով: Այս ծիլը կոչվում ե բաղիդիում: Բաղիդիումների վրա լինում են հատուկ տատմիկներ, վորոնց վրա զարգանում են միարժիշտ, անգույն, ձվածե բջիջներ, վորոնք կոչվում են բաղիդիումներ:

Բույսերին վարակում են բաղիդիումները: Բաղիդիումներն առաջանալուն պես ընդունակ են ծլելու: Այդ ժամանակ ել նրանցից արդեն դուրս են գալիս միցելիումի թելիկները: Յեթե բաղիդիումները ծլեն այնպիսի բույսի մակերեսի վրա կամ նրան մոտիկ, վորին տվյալ սունկը կարող է վարակել, ապա բաղիդիումների ծիլը մտնում է բույսի հուսվածքների մեջ և, այսպիսով, տեղի լի ունենում վարակումը: Յեթե բաղիդիումների ծլումը

հողում կատարվում է այնպիսի պայմաններում, վորտեղ նրանք մոտեն համապատասխան բույս չկա, ապա բաղիդիումներուց դուրս լեկած միցելիումը հարմարվում է սաեղծված պայմաններին և կարող է յերկար ժամանակ մնալ սապրոֆիտ վիճակում, այսինքն՝ որն վում է քայլքայլող բույսերի մնացորդներով և չի կորցնում բույսերին վարակելու ընդունակությունը: Վարակելուց հետո միցելիումներն առանձին շարունակում ե ապրել բույսի հյուսվածքի մեջ մինչև սպորների կազմվելը:

Այսպիսով՝ մրիկաւին սնկերի կյանքի ամբողջ ցիկլը հետեւյալ ստաղիաներն ունի միցելիում՝ սպոր՝ բաղիդիում՝ բաղիդիումներով՝ նորից միցելիում:


Սրանից պարզ ե, վոր վարակի աղբյուր հանդիսանում են սպորները:

Բնության մեջ հացահատիկների վարակումը կատարվում է 3 ձեռվի:

1. Վարակում հատիկի ծլելու ժամանակ.—Սպորի հաստ թաղանթն ուռչում ե և պատովում: Սպորի պարունակությունը դուրս ե գուլիս փոքրիկ ծիլի ձևով: Այս ծիլը կոչվում ե բաղիդիում: Բաղիդիումների վրա լինում են հատուկ տատմիկներ, վորոնց վրա զարգանում են միարժիշտ, անգույն, ձվածե բջիջներ, վորոնք կոչվում են բաղիդիումներ:

2. Վարակում հացահատիկների ծաղիման ժամանակ.—Սպորի գեղի մատղաշաղին ապա մեջ: Մեծ մասամբ այս ձևով և տեղի ունենում է հացահատիկների վարակումը մրիկով, ինչպես ցորենի վարակումը քարամրիկով, վարսակինը՝ փոշեմրիկով և այլն (նկ. 1),

3. Վարակում հացահատիկների ծաղիման ժամանակ.—Սպորի գեղի մատղում սպորներն ընկնում են ծաղկած բույսի վարսանդի սպիր-




Նկ. 1. ԳլՈՐԱՄՐԻԿԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՑԻԿԼ

1. Քարամրիկով վարակված բույս. 2. Քարամրիկի սպորներ. 3. Քարամրիկի սպորներն ընկել են սերմի վրա. 4. Քարամրիկի սպորի ծլումը. 5. Քարամրիկի սպորի ծլի բափանցումը հացարույսի սերմի ծլի մեջ. 6. Հացարույսի հտափի վրա ընկած մրիկի սպորները չեն ծլի յեկ սերմի ծլիը չի վարակվել. 7. Առաջ հացարույս.

վրա և միցելիումի ծիլը թափանցում և վարսանդի ներսը: Այսպես և կատարվում մրիկի լեռկու կարեռ տեսակների՝ ցորենի ու գարու վարակումը փոշեմբիկով (նկ. 2):

3. Վարակումն ամբաղջ վեգետացիայի ընթացքում.—Այս գեպքում վարակվում են միայն աճող մատղաշ որդանները: Բայց դիպիուսպոլներն ընկնելով աճող որդանների վրա՝ տալիս են միցելիումի ծիլեր, զորոնք մտնում են բույսի հուրուսվածքների մեջ: Այս ձեր վարակման որինակ կարող ե ծառայել լեզվակագործութենի բաղադրիկը:



Նկ. 2. Փոշեմբիկի ԶԱՐԴԱՅՄԱՆ ՑԻԿԼ

1. Փոշեմբիկավ վարպետած բույսեր, 2. Փոշեմբիկի սպորմերը, 3. Փոշեմբիկի սպորմերն ընկել են առաջ բույսի (ա) ծաղիկի վարանդի սպիթի (բ) վրա, 4. Ստացված օստիկը, զարթ արտաքուած առաջ ե, 5. Վարակված հատիկից ստացված բույսը, զարթ վարակված և մրիկով,

Հուրը վարակում է մեկ տեսակ բույսի պատկանող մի քանի տեսակների: Որինակ՝ ցորենին վարակող սունկն անընդունակ չե կորեկին վարակելու և ընդհակառակը:

Մրիկային պարագիտաներն ունեն նաև մի այլ հետաքրքրական առանձնահատկություն:

Մրիկային սնկերի շատ տեսակներ բաժանվում են մի շարք սասաների, զորոնք միկրոսկոպիկական հետազտառությունների ժամանակ, ըստ իրենց մորֆոլոգիական կազմի, միմյանցից վոշընով չեն տարբերվում, սակայն զանազանվում են բիոլոգիական առանձնահատկություններով, այսինքն՝ այս կամ այն բույսը վարակելու ընդունակությամբ: Այս սնկերը կոչվում են բիոլոգիական սասաներ, ձեռք կամ տեսակներ: Բիոլոգիական սասաներից լուրաքանչյուրն ընդունակ է վարակելու բույսերի վորոշ տեսակներ կամ փոփոխակներ և սովորաբար չի կարող անցնել մեկից մյուսին: Բիոլոգիական ազգակի սասաներ ներկայումս հայտնի չեն վարսակի փոշեմբիկի, ցորենի գարսամբիկի և մրիկի բաղմաթիվ այլ տեսակների մոտ: Խնչպես վերեն արգեն ասվեց, մրիկային սնկերը, չնայած իրենց ցայտուն կերպով արտահայտված պարագիտային ընդունակություններին, կարող են հողում յերկար ժամանակ ատլել սալըթոփիտ վիճակում: Ապացուցված ե, զոր անգամ լաբորատորական պայմաններում արհեստականորեն պարագատված մննդամիջավայրում, մի քանի մրիկային սնկեր կարող են ունենալ զարգացման լրիվ ցիկլ (որինակ՝ վարսակի փոշեմբիկը): Հողում մրիկի սպորի ծլունակությունը պահպանվում է 2—3 տարի:

Մրիկի սպորներն անցնելով կենդանիների մարսողական խողովակով դուրս են գալիս աղբի հետ: Հարց է ծագում, թե արդյոք այդ զեպքում մրիկի սպորները կորցնում են իրենց ծլունակությունը, թե վոչ, սրան պիտի պատասխանել զրական իմաստով, այսինքն՝ մրիկի սպորներն ընկնելով կենդանիների մարսողական իննովակի մեջ, կորցնում են իրենց ծլունակությունը: Հստ յերեսույթին դա հետեւանք և կենդանիների ստամոքսում առաջացող որդանական թթուների ազդեցության: Հետաքրքրական ե նաև այս յերեսույթը, զոր շատ տեսակի մրիկի սպորները նույնպես կորցնում են իրենց ծլունակությունը՝ սիրոսում մի քանի շաբաթ գանվելու ընթացքում (որինակ՝ յեղիպտացորենի մրիկը):

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՐԻԿԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՎՐԱ

Մրիկային հիվանդությունների վրա հակայական ազդեցությունն առնեն արտաքին միջավայրի հետևյալ պայմանները:

1. սպերմատիթարանական պայմանները՝ ջերմաստիճանը, հողի խոնավությունը, տեղումները և այլն:

2. Հաղային պայմանները.

3. ագրոտեխնիկական պայմանները, վորոնք իրենց մեջ ընդգրկում են տվյալ կուլտուրայի վերաբերմամբ կիրառվող բույր ագրոձեռնարկումները:

Ողերեկութարանական պայմանները հատկապես կարևոր նշանակություն ունեն այն մրիկների համար, վորոնք վարակում են հացահատիկին՝ ծլելու ժամանակի: Ավելի մանրամաման ուսումնասիրված ե հողի ջերմության և խոնավության ազգեցությունը ցորենի քարամրիկով վարակվելու ուժեղության տեսակետից: Այդ հարցի վերաբերյալ բերենք մի քանի տվյալներ: Ամերիկան գիտնական Հունգերֆորդն արհեստական կերպով վարակել ե ցորենի սերմերը քարամրիկով, ցանել տարբեր ջերմություն, ու խոնավություն ունեցող հողում և վորոշել վարակման աստիճանը:

Փորձի ամեն մի սերիայում հողի ջերմաստիճանը պահպանվել ե միշտ միևնույնը, իսկ հողի խոնավությունը փոխվել ե:

Ստորև տալիս ենք նրա փորձերի արդյունքները.

Փորձերի սերիա-ները	Հողի ջերմությունն ըստ C-ի	Հողի խոնավությունը	Մրեկով վարակված բույսերի %-ը
1	9—12	14	40
		17	71
		22	90
		32	19
2	17—25	12	25
		16	20
		18	21
		32	0
3	25—28	14	5
		17	0
		23	3
		28	0

Աղյուսակից պարզ կերպով յերևում է, վոր վարակման մաքսիմում $0\text{--}2$ (90%) տեղի յե ունենում հողի $9—12^{\circ}$ ջերմության և 22% խոնավության ժամանակ: Այսպիսով, վարակման համար հողի բարձր խոնավություն հարկավոր չե, այն կարող է տեղի ունենալ համեմատաբար ցածր խոնավության դեպքում: Ցուրենի քարամրիկի սպորների ծլելու համար անհրաժեշտ ե հողի 22% խոնավություն:

Հողի ալգայիսի խոնավություն են պահանջում բոլոր տեսակի մրիկային սնկերը:

Հնդկանրասպես, հարավային յերկրներում վարակումների մաքսիմում $0/0$ -ն ստացվում է հողի $8—10^{\circ}$ ջերմաստիճանում, իսկ $21,5^{\circ}$ ջ. ժամանակը ցորենը մրիկով բարորովին չի վարակվում:

Հունգերֆոնդի փորձերի նման հետազոտություններ կատարել ե նաև Ֆերրիսը և արդյունքները յեղել են համարյա թի նույնը, վորոնք բերվում են հետեւյալ աղյուսակում:

Հողի զանազան ջերմաստիճանների ազդեցուրյունը բարձրի կավ վարակված ցորենի վրա՝ եթե ծրագր ժամանակ:

Զերմաստիճան	Վարակվման %	Զերմաստիճան	Վարակման %
5	6,7	20	53,9
10	60,6	25	35,7
15	61,0	30	3,7

Այսպիսով, բոլոր հետազոտությունները ցուց են տալիս, վոր ցորենը քարամրիկով վարակվելու համար հողի պատիմում ջերմաստիճանը պիտի լինի մոտ 10° ծ-ի: Բնորոշ ե, վոր մրիկների մի քանի տեսակների համար, վորոնք վարակում են բույսին սերմի ծլելու ժամանակ, յերբեմն նկատում ենք պարագայի և հացարույսի հատիկի պահպանների զուգագիտություն՝ հողի ջերմաստիճանի նկատմամբ:

Այս յերեսույթը ցուց է տալիս, թե պարագիաը վորքուն և Հարմարված ջրապատող պայմաններին և նմանդատու բույսին:

Որինակ, այդպիսի գուգադիպություն մենք նկատում ենք վարսակի նկատմամբ, վորի մասին բերում ենք հետեւյալ աղյալները:

Ծելու համար պահանջմանը մինիմում	Ծելու համար պահանջմանը մաքսիմում	Ծելու համար պահանջմանը մաքսիմում
Զատիկի 4—50 ծ.	Սպոր 4—60 ծ.	Հատիկ 250 ծ.
Հատիկ 18—280 ծ.	Սպոր 31—340 ծ.	Հատիկ 300 ծ.

Մրեկի այն տեսակների համար, վորոնք հացահատիկներին վարակում են ծաղկելու ժամանակ, վճռական նշանակություն ունի այդ ժամանակի յեղանակը: Յեթե այդ ժամանակի վարակմանը աղյալ կարող է լինում, ապա հաջող վարակումների առկում ցածր և սուցվում, վորովներն սպարները ծաղկեների սոլիների վրա ցածր և սուցվում, վորովներն սպարները ծաղկեների սոլիների վրա ցածր և սուցվում: Մի քանի ուրիշ տվյալ:

Ների համաձայն՝ ծաղկելու ժամանակ՝ ուժեղ անձրևները խանգարում են վարակմանը, զորովնեռում լվանում ու հեռացնում են մրիկի սպորները:

Հոդի տեսակը, զորտեղ ցանքած է վարակված հացահատիկը, բնիքի վարակվածության աստիճաննի վրա մեծ ազդեցություն եւ ունենում: Այդ առթիվ Գերմանիայում Գասները մի քանի հատուկ փորձեր ե դրել և քարամրիկով վարակված ցորենը զուգընթացըրար ցանել ե կալային, ափազային, բանջարանոցային և ճահճային հոդերում:

Ստացվել են վարակման հետեւյալ տոկոսները.

Կազմին հոդ	Ավագային հոդ	Բանջարանոցային հոդ	Ռահճային հոդ
1%	29,2%	30,5%	24,2%

Այսպիսով, ողով աղքատ, ծանր-կալային հոդը վարակմանը չի նպաստում, իսկ ավագայինը՝ ընդհակառակը, հիվանդ բույսերի տոկոսը մեծացնում է: Վերջին ժամանակներու ստացվել են տըշվայինը այն մասին, զոր քարամրիկի սպորները ծլելու համար զգալի քանակությամբ թթվածին են պահանջում: Դրանով պետք է բացարել վերը բերված թվական տվյալները: Հողամասի միկրոսելֆը, զորն առաջին հայացքից կարծես թե ունի յերկրորդական նշանակություն, ինչպես ցույց են տալիս կատարված ժամանակաւում ուսումնասիրությունները, մրիկի զարգացման վրա զգալի կերպով ազդում է:

* * *

Անցնելով ազգոտեխնիկական պայմանների ունեցած աղդեցությանը մրիկի զարգացման վրա, առաջին հերթին պիտի նշնչը, զոր ընդհանրապես յուրաքանչյուր ազդութեանարկում ուժեղ զայնելով բույսի անեցողությունը, ինտենսիվությունը և զնելով այն զարգացման բարենպաստ պայմաններում, նպաստում է բույսի շվարակելուն՝ մրիկով: Մասնավորապես մրիկի զարգացման վրա խոշոր ազդեցություն են ունենում հոդի մշակումն ու պարարտաշումը:

Հոդի լավ մշակումը բույսերին հսարավորություն եւ տալիս առանց արգելքի արագ աճելու և հավասար ծլեր տալու, զորն առանձնապես կարենու և մրիկի այն տեսակների համար, զորոնք

բաւցին վարակում են ծլելու ժամանակաշրջանում: Պարարտացում ել ավելի մեծ նշանակություն ունի:

Պարարտացման վերաբերմաբ Ուկրաինայում (Խարկովի փոքրակայան) հետեւյալ յեղակացությանն են հանգել.

1. Կուլտուրական բույսերի բերքատվության վրա դրական ադդեցություն ունեցող յուրաքանչյուր պարարտացում իջեցնում է այդ բույսերի մրիկով վարակվելու տոկոսը.

2. Մեծ է գոմաղբի և հանքային պարարտանյութերի ազդեցությունը կուլտուրական բույսերի մրիկով վարակվելու վրա, վարի մասին կան հետեւյալ վոչ լրիվ տվյալները. վորքան բույսերը քիչ են ոգտագործում հողը մտցրած պարարտանյութը, այնքան քիչ են վարակվում հաջորդ տարին նույն հողում ցանքած բույսը: Յերբ բույսը պարարտացված հողում ցանվում է առաջինը, վարակվում է համեմատաբար քիչ, որինակ, հողը պարարտացվել է գոմաղբով և ցանվել ե գարնանացան գարի ու վարսակ. մրիկով վարակված գարու 10%, չպարարտացված կոնտրոլ հողամասի համեմատությամբ, իջել է 15,8% ու ով, իսկ վարակինը՝ 17,1% ափ. Պարարտացությունը հետո յերկրորդ տարվա կուլտուրան յեղել է դարձնանացան ցորեն և նրա մրիկով վարակվելու տոկոսը, կոնտրոլի համեմատությամբ, զգալիորեն քիչ է իջել, քան առաջին տարվա կուլտուրաների գեպքում:

Ցանքի ժամկետը մրիկով վարակվելու աստիճանի ահսակետից անուշագրության մատնել չի կարելի, վորովհետև նա սերտ կապված է ծլելու չերմաստիճանի պայմանների հետ, վորը, ինչպես տեսանք, վարակվելու խնդրում վճռական նշանակություն ունի: Մասնավորապես աշնանացան ցորենները՝ վաղ ցանքի դեպքում քիչ են վարակվում, իսկ ուշ ցանքի դեպքում ծիլերը դուրս են գալիս շատ ցածը ջերմաստիճանի պայմաններում, բույսը զարգանում է թույլ և գառնում վարակվելու ընդունակ: Այդ են ասում ստորև բերված տվյալները և բազմաթիվ ուրիշ հետազոտությունների արդյունքները:

Աշնանացան ցանքերի ժամկետի տղիեցուրյանը ցորենի քարամրիկով վարակելու վրա.

Յանքի ժամկետը

Բույսի վարակման %
10% հոկտեմբերի
21-ը ,
10 ը նոյեմբերի
22-ը ,

Գարնանացան ցանքերի նկատմամբ հակառակ յերևույթ՝ և նկատվում, այսինքն՝ վաղ ցանքերի համեմատությամբ ազելի ուշ ժամկետում կատարված ցանքերի մրիկով վարակվելու տոկոսը լինում ե պակաս: Այս յերևույթը լուսաբանելու համար բերենք Ավրախնայում ստացված փորձի արդյունքները:

Գարնանացան ցանքերի ժամկետի ազդեցույթը մրիկով վարակվելու վրա

Ժանրի ժամկետը	Ծրելու տևողությունը	Վարակման %-ը
2 ամը ելի	19 ր	15 %
12 >	11 ր	11 >
16 >	9 ր	8 >
24 >	8 ր	3 >
5 >	5 ր	1 >

Բազ ցանքերում վարակման 0%-ի նվազումը միանգամայն հասկանալի յէ: Դա բացատրվում է նրանով, վոր բույսի ծիլերը հողի բարձր ջերմության չորսիլ շուտ և դուրս գալիս հողի յերեսը և ազատվում վարակվելուց: Մրիկի սպորները ժամանակ չեն ունենում ծիլը և թափանցելու բույսի ծիլի հյուսվածքի մեջ:

Բայց և այսպիս այդ հանգամանքը գարնանացանի ժամկետների ընտրության վրա վճռական ազդեցություն չպիտի ունենա, վորովիճետն ցանքի վերջնական արդյունքի՝ բերքի ապահովման համար մրիկն ունի վորոշ սակայն վոչ միշտ վճռական նշանակություն: Հայտնի յէ, վոր ուշացած գարնանացանը, մանավանդ չորային շրջաններում, համարյա միշտ ել շատ քիչ բերք և տալիս Այսպիսով, բոլոր ավաներից հետևում ե, վոր գարնանալին ուժ ցանքը, վորպես մրիկի զեմ պայքարելու միջոց, վոչ մի կերպ չի կարելի սգտագործել: Ընդհակառակը, աշնանացան ցորենների վերաբերմաբ մենք ունենք վաղ ցանքերի և մրիկով վարակվելու տոկոսի իջեցման միջև բարենպաստ կապակցություն, այս պատճենով մրիկի զեմ պայքարելու ազդոկուլուուր լավագույն մեթոդներից մեկը հանդիսանում է վաղ աշնանացանը:

Սերմի ցանելու խորույթներ.— Սերմի նորմալ խորությամբ ցանելը թուլացնում է մրիկի զարգացութը: Զարմագանց խոր ցանելիս ծիլերը յերկար ժամանակ չեն կարողանում հողի յերեսը դուրս գալ և հեշտացնելությամբ վարակվում են:

Հացանատիկների սերմոցուի վրա գտնվող ոպորների հանունի համարկությունը: — Բացի վերև թված ազդուելինսիկան բոլոր պայմաններից, ինչպես պարզվել է վերջին տարիների հետազոտությունների ավյաններից, մեծ նշանակություն ունի նաև յուրաքանչյուր տվյալ հատիկի վրա գտնվող մրիկի սպորների քանակը: Կարելի յէ ասեն, վոր հատիկի վրա յեղած մի սպորն անգամ կարող է վարակման պատճառ դառնալ, բայց այս դեպքում վարակման հավանականությունն արդեն քիչ կլինի: Յեվ իսկապես, մենք նկատում ենք, վոր ինչքան շատ և սպորների քանակը տվյալ յուրաքանչյուր հատիկի վրա, այսքան մեծ և այդ սերմերից աճած բույսների վարակման 0%-ը:

Հյուսիսային կովկասում կորիկի կատարած հետազոտությունները հայտնաբերել են մեկ հատիկի վրա յեղած սպորների քանակի և բերքի վարակվածության 0%-ի միջև յեղած հետեւյալ կապակցությունը:

Տարենի վարակվածության տևողությունը բարակիկով՝ սերմերի վրա իդում մրիկի սպորների տարբեր համակարգ դեպքում:

Հատիկի բնակվածությանը	Բերքի մեջ մրիկի 0%-ը
Մինչև 500 սպոր	Մինչև 2,5 0%-ը
> 2500	> 10 0%-ը
> 2500 սպորից ավելի	100%-ից ավելի

Բացի հատիկի վրա յեղած սպորների ընդհանուր քանակից, նշանակություն ունի նաև սպորի սերմերի վրա գտնվելու տեղը: Վարակման ամենամեծ դերը խաղում են այն սպորները, վորոնք սերմի սաղմին մոտ են գտնվում:

ԳԼՈՒԽ ՑԵՐՌՈՐԴ

ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՐԻԿՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ՑՈՐԵՆԻ ՄՐԻԿԸ

Ցորենի վրա լինում եւ 3 տեսակ մրիկ—քարամրիկ, փոշեմրիկ և ցորենի մրիկ:

Ցորենի մրիկ.—(Tilletia tritici).—Ցորենի քարամրիկն այլ կերպ կոչվում է թաց, գարշահոտ մրիկ: Այս անուններից յուրաքանչյուրն ունի իր պատճառները, վորոնց հետ կծանոթանանք հետագայում (նկ. 3):

Հիվանդության նեանները.—Քարամրիկով վարակվելու զեղագում ցորենի հատիկի բովանդակությունը վեր և ածվում սև փոշենման մասսայի, վորը բաղկացած և մրիկի սպորներից: Սերժնաթաղանթը և հասկի մնացած մասերը՝ ինչպես ծաղկային և հասկային թեփուկներն ու քիստերը՝ մնում են անվնաս: Այդ մրիկը փոշեմրիկի նման չի փոշիանում, ուստի կոչվում է կարծր մրիկ կամ քարամրիկ:

Վարակված հասկերն առաջին հայացքից արտաքին տեսքով համարյա վոշնչով չեն տարբերվում առողջ հասկերից: Սակայն մոտիկից քննելիս, հիվանդ և առողջ բույսերի մեջ բավականաշափ զգալի տարբերություն ենք տեսնում: Վարակված հատիկներն առողջների նկատմամբ քիչ ուռած և հաստացած են յերկում, այդ պատճառով ել նրանց ծածկող թեփուկները լինում են չպամ, զուրֆ հետանքով հիվանդ հասկը մի փոքր հաստացած տեսք և ունենում: Հիվանդ բույսերն առողջ բույսերից տարբերվում են նաև նրանով, վոր սրանք կարճակասակ են լինում, յերկար ժամանակ կանաչ են մնում և նրանց հասկերը վոչ թե խոնարհվում են ինչ-

պես առողջ հասկերը, այլ մնում են ուղիղ կանգնած: Հատիկը սովորական բնական գույնի փոխարեն ունենում է կանաչամոխրագույն յերանդ, վորը պայմանավորվում է հատիկի ներսը գտնը-վող սպորների սև գույնով: Քարամրիկի սպորները չափազանց էֆորոսկոպիկ են և հեշտությամբ ներծծում են մթնոլորտային խոնավությունը և այդ ժամանակ միայն նրանք կալչում են մի-մյանց հետ: Մրիկի սպորներով լի հատիկները տրորելիս սպոր-ները սևացնում են ձեռքերը, իսկ շոշափելիս թվում են յուղոտ կամ թաց, վորտեղից ել առաջացել են նրա մյուս անունը՝ թաց մրիկ: Այս մրիկը նաև գարշահոտ մրիկ և կոչվում այն պատճառով, վոր նրա սպորներն արձակում են արիմեթիլամին — ցնդող նյութ, վորը հոտած ձկան անդուրեկան հօտ և ունենում: Մրիկի սպոր-ները շատ մանր են և յուրաքանչյուրը հիվանդ հատիկում նրանց թիվը 11—23 միլիոն ե, միջին թվով 17 միլիոն:

Պարագիտի բիոլոգիան: — Քարամրիկի սպորները հատիկի թաղանթով ծածկված են լինում մինչև կալսելը, իսկ կալսելու ժամանակ սերմնաթաղանթը պաշարվում է և սպորները փոշիանում են ու թափվելով առողջ հատիկների վրա՝ կեղտուում նրանց: Սպորներն այստեղ մնում են մինչև ցանքը: Այսպիսի աղտոտած սերմը ցանելիս, սերմի ծլելու հետ միաժամանակ, ծլում են նաև սպորները: Չոր տեղում պահելիս թեև սպորները չեն ծլում, սակայն իրենց ծլունակությունն յերեմն ալահում են յերկար ժամանակ՝ մինչև 12 տարի: Սպորը հողում կամ սերմացուի մակերեսի վրա ծլելով առաջիս միարժիշտ բաղիղիում, վորի ծայրին պարկածն նստած են լինում բազիդիոսպորները, սովորաբար թվով 8 հատ:

Բազիդիոսպորներն իսկույն ծլում են՝ տալով միցելիում,



Նկ. 3. Ցորենի Մրիկ
1. Փաշեմրիկ. 2. Քարամրիկ. 3. Ցորենի Մրիկ

վորն վարակում ե բույսին: Միցելային այս ծիլը մտնում ե ցարենի մատղաշ բույսի ծիլի մեջ և այդպիսով վարակում ե նրան: Վարակումը կարող ե տեղի ունենալ մինչև ծիլի առաջին տերևները, վորից հետո միցելիումը ծիլի մեջ այլևս թափանցել ու բույսին վարակել չի կարող:

Ալպախոսվ, ուրեմն, բույսին վարակողը սերմերի մակերեսին գտնվող սպորներն են: Այն շրջանների հողերը, վորտեղ տարածված ե քարամրիկը, սովորաբար նույնպես մեծ քանակությամբ սպորներ են պարունակում, մանավանդ այն վայրելում, վորտեղ հացահատիկները գաշտում են կալուում: Ամերիկական տվյալներով, այլպիսի հողամասերի մակերեսային շերտի չուրաքանչյուր քառակուսի մետրը պարունակում է 15 միլ. պիկրի սպոր: Սպորները հողում իրենց ծլունակությունը կորցնում են 2-3 տարուց հետո: Յանքաշրջանառություն կազմելիս նրանց այդ հատկությունը նկատի պետք է ունենալ: Կարելի է ընդունել վոր վարակված ցորենի ցանքից 2-3 տարի հետո հողը մաքրված կլինի բույսերին վարակելու ընդունակ սպորներից:

Մըրիկի միցելիումը թափանցելով ծիլի մեջ՝ սկսում է ոնվելու յախ մեջ և ճյուղավորվել ցողունի հյուսվածքներում։ Միցելիումը մինչև բույսի հասկակարումը արտաքուստ վոչչնչով չի արագահայտվում։ Այդ ժամանակաշրջանում նա կուտակվում է վարապեսներում և վեր և ածվում սպորտներից բաղկացած ուն մասաւոյի։

Այսպիսով, հիվանդության դարդացման այսպես կոչված խաղուն կամ ինկուբացիոն քջանը քավականին յերկար է տևում՝ կամած ծլելու ժամանակից մինչև ցորենի հասկավորումը։ Մրկեսկոպով դիտելիս քարամքիկի սպորները բավականին խոշոր ն յերեսում և ունենում են ձգածներ կամ մի քիչ անկյունավոր տեսք։ Ազորի թաղանթն ունենում է ցանցի տեսք. քարամքիկի սպորերը դիտելիս կարող են պատճենել նաև այնպիսիներ, վորոնց թանթը ցանցածն չե, այլ հարթ։ Այս հարթ թաղանթ ունեցող ուսպորները պատկանում են քարամքիկի մի այլ տեսակի, որը լատիներեն կոչվում է Tiletia levii։ Հայտնատանում քարամքիկի այդ յերկու տեսակներն ել առաջաձգած են:

Քարտամիկը հանդիսանում է ցորենի ամենից վասակար հի-
անգությունը և, ամենուրեք տարածված լինելու հետևանքով,
երբ զգալի կորուստ և պատճառում: Բերքի իշեցումից բացի,
որին իշեցնում է նաև նրա վորակը. մըրիկով վարակված հազա-

Հատիկը չորացրած ձկան անդուրեկան հոտ և արձակում։ Ամենա-
աննշան քանակությամբ մրիկի սպորներ պարունակող ալյուրը
հեշտությամբ խոնավանում է և փառ և թխվում։

Պայմանի միջոցները.— Ցորենի քարտամրիկի դեմ գլխավորապես պիտի պայքարել ախտահանելով սերմերը (թաց կամ չորյեղանակով) և մի շարք կազմակերպչական ու ազրոտեխնիկական միջոցառումներով, վորոնց մասին մանրամասն խոսվում է այս գրքի հինգերորդ գլխում:

Ցարեմի փուշեմրէ կր (Ustilago tritici). — Փոշեմրիկովհիվանդանալու զետքում ցորենի ամբողջ հասկը, հատիկը, թեփուկները և նույնիսկ քիստերը վեր են ածվում սպորից բաղկացած և փոշու մասսայի: Զի քայլալիվում միայն հասկի առանցքը: Հիվանդությունն արտահայտվում և հասկակալման ժամանակ, յերբ տերեապատայանից փոխանակ առողջ հասկերի, դուրս են գալիս միանդամայն քայլալիված հասկեր: Հիվանդ բույսերը հասկակալում են առողջ բույսերից մի քանի որ առաջ և գոշտում՝ անգամ հեռվից՝ նկատելի յեն: Արտաքինից վաչնչով չպաշտպանված փոշեմրիկի սպորները տարածվում են քամու միջոցով: Այդ տեղի յեւ ունենում ցորենի ծաղկման շրջանում: Սպորներն ընկնում են շրջապատող առողջ բույսերի ծաղիկների վարսանդի ազիների վրա: Այսուեղ սպորներն իսկուժն ծլերով ատախ են վոչ թե բաղվադիում, ինչպես լինում է սովորաբար, այլ միցելիումի ծիլ, վորը թափանցում և վարսանդի մեջ: Վարսանդում միցելիումի ծիլը մի քանի թույլ ճուղավորութեար և տալիս և այլս չի զարգանում, այլ միում և հանգիստ վիճակում: Բեղմնափորված վարսանդը շարունակում և զարգանալ և նորմալ հասունանալ ու նրա միջի միցելիումի ներկայությունը համարյա թե վաչնչով չի արտահայտվում: Վերջին տարիների հետազոտությունները հաստատել են, վոր փոշեմրիկով վարակված հատիկներն առողջ հատիկների համեմատությամբ լինում են մի փոքր խորշումած: Յերբ ցանգում և ներսից վարակված սերմ, սերմի ծլերու և աճելու հետ սկսում և աճել նաև սերմի մեջ հանգիստ վիճակում զտնվող միցելիումը, վորը հետազոտում շարունակում և զարգանալ բույսի զարգացման ու աճման հետ միասին: Հասկակալման ժամանակ վարսանդներում նա սպորներ և կազմում և դրանով ել վերջանում և փոշեմրիկի սնկի զարգացման ցիկլը: Ցորենի փոշեմրիկի սպորները մանր են, գնդաձև կամ մի փոքր անկյունաձև, մուգ-դարչ գույնի: Թաղանթը ծածկված և մանրիկ գորտնուկներով:

Խեշպես յերեսում և զարգացման ցիկլի նկարագրությունից, ավաշ գեղքում վարակման աղբը ուրը հանդիսանում է բացառապես սերմացուն։ Սակայն այս դեպքում վարակը գտնվում է վոչ թե սերմի մակերեսին, ինչպես այդ նկատվում է քարամրիկով վարտիված լինելու ժամանակի, այլ հաստիկի մեջ, միցելիումի ձևով։ Այդ պատճառով ել ախտահանումը՝ վորախո պայքարի դուռ արտաքին միջոց՝ տվյալ դեպքում անընդունելի յն։

Հյուսիսային Ամերիկայում աշորան վարակված և ցորենին վարակող փոշեմրիկով։ Սակայն աշորայի այլատեսակների մեծ մասն այդ հիվանդության նկատմամբ դիմացկուն եւ։

Պայմատի միջոցները.— Սերմացուի վրա պիտի ազդել առաջով, վորի ջերմաստիճանն այնքան բարձր պիտի լինի, վոր սպանելով հատիկի մեջ գտնված միցելիումին՝ չմնասի հատիկի ծլունակությունը։

Յանենի ցողունային մրիկը (*Urocystis tritici*).— Այս հիվանդաթյունը յերեսում և հասկակալման սատղիայում, յերբ հիվանդ բուլսի ցողունի կանաչած մասերում (հաճախ հենց հասկի տակ) առաջանում են ուռուցիկներ՝ մոխրագույն, փրփած զոլերի ձևով։ Շատով այս ուռուցըների վրա ըստ յերկարության առաջանում են մեկ կամ մի քանի ձեղքվածքներ, վորոնցից և դուրս և թափվում ու փոշի։ Քասովածքն ընդգրկում է ցողունի յերկարությամբ 5—20 մմ տարածություն։ Հիվանդ բուլսերը կամ բոլորովին չեն հասկակալում կամ տալիս են թուլլ, անպատճ հասկեր։ Յերեն հասկը տերեւապատյանից դուրս չի գալիս, իսկ ցողունը շարունակում է աճել։ Այդպիսի դեպքերում տերեւապատճնը պատըռվում է և ցողունը նրա միջից դուրս և գալիս կողքից, կազմելով կիսառակածն ծովածք։ Այդպիսի վասավածքներ յերենին նկատվում են նաև ցորենի տերեների վրա։ Ցողունային մրիկի սպորները լինում են խմբերով և սովորաբար ամեն մի խմբում միացած են լինում 2—3 ծլունակ սպոր։ Դրանց զրջապատճում կան թևանման միարջիջ հավելվածներ, վորոնք թուզող սպորների գեր և խաղում և նպաստում են սպորներին՝ ոդով հեշտությամբ տարածվելու։ Սպորները հեշտությամբ տարածվում են հնձելու և կալսելու ժամանակ, ընկնելով հողի մեջ և առողջ սերմի վրա։ Սպորները գարնանը ծլում են և վարակում ցորենի ծիլերին։ Չորս որում պահելու դեպքում սպորներն իրենց կենսունակությունը պահպանում են առնվազն 5 տարի։

Ցորենի ցողունային մրիկը տարածված և Ավստրալիայում և ասիական յերկրներում (Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա)։

1919 թ. առաջին անգամ ցողունային մրիկը հայտնված է ԱՄՆ-ում, վորտեղ նաև այժմ լայն չափերով տարածված է։ Յեկուպական յերկրներից նաև տարածված է Սպանիայում ու Ռումինիայում, ապա նաև Թուրքիայում։ Միության մեջ առաջին անգամ անցյալ տարի փոքր չափերով նկատելի յեր Աղբբեջանում։ Հայաստանում այդ հիվանդությունը չի նկատված։ Հայաստանի Հողմովկոմատը բոլոր միջոցները ձեռք և առնում մեր ցանքերը պաշտպանելու այդ հիվանդությունից, վոր սերմացվի հետ կարող և դրսից բերվել։

Պայմատի միջոցները.— Սերմերի թաց և չոր ախտահանում։

ԳԱՐՈՒ ՄՐԻԿԻ


Գարու վրա լինում եւ յերկու տեսակ մրիկ՝ քարամրիկ և փոշեմրիկ։

Պարու հարամրիկը (*Ustilago hordei*).— Մրիկով վարակվելու գեղքում գարու միայն հատիկներն են վերածվում սպորներից բաղկացած ու մասսալի, իսկ նրանց ծածկող թեփուկները մնում են անվիտա, թեև մի փոքր ձևափոխվում են։ Գարին դառնում և սպիտակալուն, նուրբ ու թափանցիկ, այնպես վոր սպորների սև մասսան պարզ կերպով նրանց միջից նկատելի յել լինում։ Քիստերը մնում են։ Ալտեղ ել վարակում տեղի է ունենում ախտիս, ինչպես ցորենի քարամրիկով վարակվելու ժամանակ, այսինքն՝ կալսելիս սպորներն աղտոտում են առողջ սերմերը Ալգախիսի սերմերը ցանելիս սպորները ծլում են սերմի հետ միասին և վարակում են հատիկի մատղաջ ծիլը։ Ավա մրիկի միցելիումը զարդարում է բուլսի զարգացման հետ միասին, և հասկակալման ժամանակ ստացվում է հիվանդ հասկ։ Վարակվել կարող են միանըլուրովին մտաղաջ 5 մմ բարձրության չհասած ծիլերը։ Գարու քարամրիկի սպորները կլոր են և հարթ թաղանթով։

Պայմատի միջոցները.— Սերմի կիսաչըր և թաց ախտահանում։

Պարու փոեմրիկը (*Ustilago oada*).— Պարու փոշեմրիկն արտաքին տեսքով անկի բխողգիալով, սպորների կատուցվածքով ցորենի փոշեմրիկից վոչնչով չի տարբերվում, այսինքն՝ վոչնչանում ու սև փոշի յել դարձնում հասկի բոլոր մասերը, բայց չանում այլուրը։ Տարբերությունը միայն այն է, վոր փոշեմրիկը գարուն կարող և վարակել վոչ միայն ծաղկելու ժամանակ, այլև հազվագյուտ դեպքերում նաև այլ ճանապարհներով, այսինքն՝ սպորները կարող են մնալ հատիկի և թեփուկի արանքում ու ծիլերը կարող են մնալ հատիկի և թեփուկի արանքում։ Այդ ժամանակ ել վարակում է ծիլը։ Հողումներմի ծլելու ժամանակ։ Այդ ժամանակ ել վարակում է ծիլը։

Գիրմանիալում կատարված հետազոտությունների համա-
ձայն, միցելիումը հատիկի մեջ իր կենսումակութիւնը կաբող է
պահել առնվազն 3 տարի և նույնիսկ մինչեւ 5 տարի։



Նկ. 4. ԳԱՐՈՒ ՄՐԻԿԸ

1. Փոշեմբիկ, 2. քարամբիկ, 3. տառղ բայս.

Գարու փոշեմքիկն ընդունակ և ցորենին ել վարակել:
Գարու փոշեմքիկի սպորտներով ցորենը արհեստականորեն վարա-
կելու գեպֆում 50% հաջող վարակում և ստացվում:

Պայմանը միջոցները. — Սերմի տաքացում:

ԱՆՐԱՅԻՆ ՄՐԿԵ

Աշորան վարակվում է քարամբիկով, ցագունալին մըիկով և
հաղվադեպ՝ փոշեմբիկով:

Աղուայի ժամփեկը (Tilletia secalis). — Աշուրալի քարա-

մբիկը մեղ մոտ՝ Առլէրդացին Միության մեջ մինչև վերջին տարիներս համեմատաբար քիչ եր պատահում: Սակայն վերջին տարիներս զգալի շափերով տարածվել և դասվում ե այն վասակառ մքրիկների շաբաթը, վորոնք հասցնում են տնտեսական վասա: Արտաքին տեսքով նա նման է ցորենի քարամբիկին, այսինքն վոչչացնում և հատիկի պարունակությունը, միայն անվասաթողնելով հասկի մասցած բոլոր մասերը: Սպարները տարածվում են կարելու ժամանակ, իսկ վարակումը տեղի յե ունենում հատիկի հողի մեջ ծլեյու պրոցեսում: Աշորայի քարամբիկի սպորները զնդանե են՝ ծածկված հաստ ցանցաթաղանթով:

Պայման միջոցները.— Աերմի չոր կամ թաց ախտահանում:

Աշուայի զողունային մթիկը (*Ustocystis occulta*) — Աշորացի ցողունային մթիկը վոչնչացնում և ցողունի մասերը, դաքձնում ե բույսին նվազ և չի թողնում հասկակալելու։ Իր վարակերտ ձևով և սնկի բիոլոգիական հատկություններով, մթիկի այդ տեսակը նման է ցորենի ցողունային մթիկներ։

Յողուհին մրիկի սպորտները ցրվում են գլխավորապես կալսերու ժամանակ, իսկ վարակումը տեղի յեւ ունենում ծելիթու Վարակման ազդյուք են հանդիսանում սերմի վրա կամ հողում պանվող սպորտները։ Աշորայի ցողունի մրիկն ավելի քիչ և տարածված, քան մրիկի մյուս տեսակները։ Միության մեջ նա համարյա վոչ մի տնտեսական նշանակություն չունի։

Պայմանի միջոցները.— Սերմի չոր կամ թագ ախտահանում:

Աշուալի փուչեմրիկը (Ustilago Vavilovi). — Աշուալի փոշեմրիկը հայտաբերված է Միջին Ասիայում, բայց շատ սակավ քաղաքակությամբ: Իր վարակման նշաններով նա նման է ցորենի փոշեմրիկին, ուսկայն վերջինից տարբերվում է միայն նըանով, վոր սովորաբար վարակում ե վոչ թե ամրող հատկը, այլ ցածրի մասը, իսկ վերին մասը մնում է անփոփոխ: Վարակում ե, բառ յերեսութին, ծլելու ժամանակ: Վարակման ազդյուք են համովիսանում սպորները, զորոնք կալբելու ժամանակ: Կալչում են առողջ հատկեներին:

Աշորայի փոշեմբիկի պատճառ են հանդիսանում 2 տեսակի
սոմկ՝ *Utilago tritici*, այսինքն՝ այն նույն տեսակը, վորն առա-
ջացնում ե ցորենի փոշեմբիկը և *Ustilago Vavilovi*-ն։ Մըիկ առա-
ջացնող այս վերջին տեսակը բացառապես աշորային և վա-
րակում. *Ustilaqo tritici*-ից տարբերվում ե սպորների կազմու-
թյան մի քանի միկրոսկոպիկ տառնձնահատկություններով։

Պայմառի միջոցները.— Սերմի չոր և թաց ախտահանում.

Վարսակը վարակվում է յերկու տեսակի մրիկով—փոշեմրիկով և քարամրիկով:

Վարսակի փաշեմրիկը (Ustilaqo avenae).—Դաշտում վարսակի փոշեմրիկը նկատվում է հասկավորման սկզբնավորումից մի առ ժամանակ հետո, զորովհետեւ հիվանդ հուրանները տերեապատյանից դուրս են գալիս առողջներից մի փոքր ուշ:

Հատիկը, ծաղկակցալին թեփուկները և քիստերը վարսակի փոշեմրիկով վարակվելու ժամանակ վեր են ածվում սև մասսալիք։ Համարյա անփոփոխ են մնում միայն ծածկող թեփուկները։

Սովորաբար հուրանի մեջ վարակվում են բոլոր հասկերը։ Յերեմն առողջ են մնում հուրանի ծայրերը։ Տերեապատյանից հիվանդ հուրանների դուրս գալու ժամանակ և հետագայում կալուիս մրիկի սպորներն ընկնում են հողի մեջ ու սերմի վրա։

Վարսակումը կատարվում է ծելու ժամանակ, ապա միցելիումը հասնելով ծիլ ծայրը՝ շարունակում է անսկատելի զարդանալ մինչև հասկակալումը, զորի ժամանակ ել հայտաբերվում է վարակումը։ Բացի նկարագրած ձևից, վարակումը կարող է կատարվել նաև հետեւալ կերպ։ ծաղկելու ժամանակ սպորներն ընկնելով շրջապատող առողջ ծաղիկների վարսանդների սպիների վրա, տառաջացնում են միցելիում, զորը տեղակորվում է թեփուկի ներսի կողմից՝ հատիկի մակերեսի վրա։ Այս միցելիումը վարակում է սերմից դուրս յեկող ծիլերը։ Յեթե սերմը պահվում է բավականաշտի կամ ավելի բարձր խոնավության պայմաններում (12—13%), ապա միցելիումը հատիկի մակերեսից թափանցում է նրա ներսը և վարսակում ծիլն։

Սպորներն իրենց ծլունակությունը պահում են 3 տարի։ Սնկերը նույնպես ընդունակ են յերկար ժամանակ սապրոֆիտ ձևով ապրելու, յերբ հողում կան բավականաչափ խոնավություն և մննդանյութեր (գոմալլը, գոմաղբահյութ)։ Վարսակի փոշեմրիկի սպորները կլոր են կամ մի փոքր յերկարավուն, բաց-գորչագույն թաղանթով և պատած մանրիկ գորտնուկներով։

Պայտարի միջոցները։—Սերմի թաց կամ կիսաչոր ախտահանում։

Վարսակի բարամրիկը կամ ծածկված մրիկը (Ustilaqo levis).—Վարսակի ծածկված մրիկը փոշեմրիկից զանազանվում և նրանով, զոր նրա սպորները հասունանալիս չեն ցրվում, այլ մնում

են ամուր մասսայով՝ միացած և թեփուկներով ծածկված։ Սպորները փոշեմրիկի սպորների համեմատությամբ լինում են ավելի մուգ գույնի և միանգամայն հարթ։ Սպորները փոշիանում են կալսելիս, վարակումը տեղի լի ունենում նույն ձևով, ինչպես վարսակի փոշեմրիկի ժամանակ։

Պայտարի միջոցները։—Սերմի թաց կամ կիսաչոր ախտահանում։

ՅԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄՐԻԿԻ

Հայտնի լի յեգիպտացորենի յերկու տեսակ մրիկ—բշտիկուր մրիկ և փոշեմրիկ։

Յեգիպտացորենի բշտիկա-փոր մրիկ (Ustilaqo Zeae կամ ustlaqo maydis).—Յեգիպտացորենի բշտիկավոր մրիկը հիվանդ բուլսերի վրա առաջացնում ե զանազան ձևի ու մեծության (յերբեմն բուլսերի կամ ծծկեր յերեխայի զլիսի մեծությամբ) ուսուցքներ կամ բշտիկներ։ Այդ ուսուցքները սովորաբար ծածկված են լինում սպիտակ կամ վարդագույն պերգամենտանման թաղանթով։ Ներգուստ բաղկացած են լինում մրիկի սպոր առաջացնող թելիկներից և բուլսի պարենիտիւտիկի թիջներից։

Այդպիսի բշտիկներ նըկապում են ցողունի բուրենիկ, արական և իգական ծաղկափթթունների և նույնիսկ արմատների վրա։ Ցողունների վարակման դեպքում ուսուցքները մեծ մասամբ առաջանում են հանգուցներում և լինում են զընդակական կամ պալարաձև։ Տերենների վրա ուսուցքները շարված են լինում մեջտեղի զլի, յերկարությամբ։ Իգական ծաղկափթթուններում վարակվում են առանձին վարսանդները, վորոնք շատ



Խիստ ուռչում են ու մեծանում: Յեթե վարակված են իրար կից գտնվող մի քանի կամ շատ հատիկներ, նրանք վեր են ածվում ուռուցքների տև մասսավի: Բշտիկավոր մրիկի վնասակար աղղոցությունից հայտնի չե այն, վոր յեթե ուռուցքները գոնվում են կողրերից վեր, ուժեղ չափերով նվազում ե բերքը: Յերբ ուռուցքները գոնվում են կողրերից ցած, բերքը համեմատաբար քիչ է նվազում: Առհասարակ բերքն աճնքան շատ է պակասում, վորքան խոշոր են լինում ուռուցքները: Սպորների հասունանալու ժամանակ մրիկի ուռուցքները ծածկող թաղանթը չորանում, պատռվում ե և մուգ-գորշագույշ փոշին դուրս և թափվում:

Բշտիկավոր մրիկի սպորները կլոր են կամ ձվաձև, ունեն գեղնաւ-գորշագույն թաղանթ, վորը ծածկված է փշիկներով: Սպորներն ընկնում են սննդանութերով հարուտ հողի վրա և բարականաչափ խոնավություն լինելու դեպքում ծլում՝ տալով մեծ քաշակությամբ բաղդիսապորներ: Վերջիններս գոմազրով հարուտ հողում խիստ բողբջավորվում են, տալով նոր սպորներ: Հողի վերին շերտերի վրա գտնված սպորները քամու և անձրևների ժամանակ հողի մասնիկների հետ բարձրանում են ողի վերին շերտերը, վորտեղից ել ապրածվում են և ընկնելով լեղիպատացորենի ուռող մասերի վրա՝ վարակում նրան:

Այստեղ միջելիումը մտնում է առողջ, մատղաշ հյուժվածքի մեջ և ինկուսացիոն շրջանից հետո, վոր մուտավորապես տեսում է յերեք շաբաթ, վարտկված տեղում առաջացնում և ընորոշ ուռուցքներ: Այսպիսով բույսի վրա լերևացող լուրաքանչյուր ուռուցք հետևանք և տեղական ինքնուրույն վարակման:

Վարակվելու ընդունակ են հասունացած բուսերի բոլոր աճող հյութալի որդանները: Հենց վոր ծածկող հյուսվածքները կոշտանում են և որդանները աճելուց դադարում, նրանք այլևս չեն վարակվում: Յեղիպատացորենի մատղաշ ծիլերը վարակվում են այն ժամանակվանից, յերբ նրանք հասուն են 30—40 ամ բարձրության: Փորձեր են լեղել բուսերին արհեստականորեն վարակելու ավելի մատղաշ հասակում, սակայն վարակումների միայն շատ չնչին տոկոսն է հաջողվել:

Բշտիկավոր մրիկի սպորներն իրենց ծլունակությունը պահպանում են մինչև 5 տարի:

Պայմանի միջօցներ: — 1. Մրիկային բշտիկները կտրում և պարում են նախքան սպորների ցրվելը, 2. լեղիպատացորենի ցանքերը թարմ գոմազրով չպետք է պարարտացնել, վորովհետեւ

վերջինս նպաստում ե սպորների՝ հողի մեջ բազմանալուն, 3. գոմազրակույտի վրա չպետք է թափել վարակված լողիպատացորենի մնացորդները: Սերմի ախտահանումն եֆեկտ չի տալիս, վորովհետեւ սպորները ձմեռում ե բազմանում են հողում:

Յեղիպատացնենի փաշեմերիկ (Ustilago Reiliiana). — Յեղիպատացներնի վրա, բացի բշտիկավոր մրիկից, հազվագեղ պատահում ե նաև փոշեմրիկ. վերջինս տարբերվում է բշտիկավոր մրիկից նրանով, վոր բացառապես վարակում է արական և իղական ծաղկափթթությունները, նրանց վերածելով փշիկնման մասսավի պատված բարակ թաղանթով (նկ. 6): Զորանալիս հիշալ թաղանթը պատված է և սպորներն աղատվելով՝ ընկնում են հողի մեջ:

Յեղիպատացներնը փոշեմրիկով վարակվում ե հողից՝ բույսերի զարգացման առաջին շրջանում, ըստ վորում վարակումը հարավոր և բարական յերկար ժամանակամիջոցում: Մասնավորապես ծիլերը վարակվում են դեռ 10—12 ամ բարձրություն ունենալիս: Յեղիպատացներնի փոշեմրիկի սպորներն աղատվելով, զնդան են, մուգ-գորշագույն փշիկներով ծածկված:

Պայմանի միջօցներ — Վորոշակած չեն:

ԿՈՐԵԿԻ ՄՐԻԿՈՒ ՈՍՏԻԼԱԳՈ PANICI MILIACEI

Կորեկը վարակվում է մի տեսակ մրիկով: Այդ մրիկը հանդիս է գալիս հուրանի առաջացման ժամանակ (նկ. 6): Ամբողջ հուրանը վեր և ածվում սև փոշու, վորը մի ամբողջական իւկածն առ մասսա լին, արտաքինից ծածկված մուգ-սպիտակավուն թաղանթով, վորի տակ գտնվում են սնկի սպորները:

Կորեկի կալմելու ժամանակ սպորների մասսան ծածկող սպիտակավուն թաղանթը պա-



նկ. 6. ԿՈՐԵԿԻ ՄՐԻԿՈՒ
Ազգական չպարագած բայց,
Զախիչ մրիկով վարակված բայց

աղովում ե և սպորները փոշիանալով նստում են հողի ու առողջ սերմի թաղանթի վրա:

Բույսը վարակվում է սերմը հողի մեջ ծլելու ժամանակ, յերբ սերմի հետ ծլում են նաև նրա վրա յեղած սպորը և վարակում մտազաշ ծիլերին: Սպորները գորշ գույնի յեն լինում, կլոր, յերբեմ անկանոն, թաղանթը՝ հարթ:

Պայքարի միջոցները.—Սերմի թաց և կիսաչոր ախտահանում:

ԳԼՈՒԽ ԶՈՐՅՈՐԴ

ՀԱՅԱԲՈՒՅՈՒՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԻՄԱՑԿՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՐԻԿԻ ԴԵՄ

Հակամը իկային ախտահանությունը և մանավանդ հակամիկային պայքարի միջոցառումների սիստեմի կիրառումը կարող են բավականին նվազեցնել մրիկից ստացվող վնասը և չընցին չափի հասցնել այս: Սակայն վրա համար պահանջվում է մեծ աշխատանք, վորը բավականին թանգ ե նստում և, վերջին հաշվով, արմատապես չի լուծում մրիկը վերացնելու հարցը: Այս պատճառով ծագում է անհրաժեշտություն՝ գտնելու մրիկի դեմ պայքարելու մի այլ միջոց և, վորն ավելի եժան նստի և արմատապես լուծի մրիկին հաղթահարելու գործը: Ահա սրա համար պահանջվում է հայտարերեւ հացարուկսերի միջից, կամ ստեղծել (հիբրիդ անելու միջոցով) ախտիսի տեսակներ, վորոնք ունեն իմունիտետ՝ մրիկի դեմ, այսինքն՝ չեն վարակվում մրիկով:

Հացարուկսերի մշակելու ընթացքում նկատել են, վոր բուր տեսակի հացարուկսերը միատեսակ չեն վարակվում մրիկով, այլ նրանցից մի մասը շատ և վարակվում և վորոշ մասն ել՝ քիչ, և կան այնպիսիները, վորոնք բոլորովին չեն վարակվում: Մարդը յուր գործունելության ընթացքում աշխատել ե գտնել մրիկով չվարակվող հացարուկսերի տեսակներ ու ստեղծել նորերը, վորոնք դիմանում են մրիկին, այսինքն՝ ունեն իմունիտետ:

Գիտնականներն ուսումնասիրելով զանազան հիվանդություններով և մասնավորապես մրիկով հիվանդացող հացարուկսերը (նույնպես և զանազան հիվանդություններով հիվանդացող պարունակություն), աշխատել են բացատրել իմունիտետի լերսուլթը:

Այժմ ընդունված ե այն բացատրությունը, վոր տիեզ ե ակագի-
միկ Ն. Ի վավիլովը. բուշսերի իմունիտեաը, այսինքն՝ բուշսերի
չիվանդանալը զանազան հիվանդություններով, վորոնց թվում և
հացարությունի հիվանդանալը մրիկով, բացատրվում ե նրանով, —
ասում է Ն. Ի. Վավիլովը, — վոր հիվանդություն առաջացնող
պարագիտաները, վորոնց թվում և մրիկը, իրենց զարգացման
ընթացքում հարմարվել են վորոշ բուշսերի և չեն կարող վարա-
կել բոլոր տեսակի բուշսերին: Որինակ, ցորենի մրիկը կարող է
վարակել միայն ցորենին, իսկ վարակել վարուն, վարսակին,
կորեկին, աշորային և այլն՝ չի կարող: Գարու քարամիրիկը կա-
րող է վարակել միայն գարուն, տեղիպատճորենի մրիկը՝ միայն
յեղիպատճորենին, վարուակի մրիկը՝ միայն վարսակին, կորեկի
մրիկը՝ միայն կորեկին և այլն:

Բացի այս, ցորենի մրիկը կարող է վարակել վոչ բոլոր տե-
սակի ցորեններին, գարու մրիկը՝ վոչ բոլոր տեսակի գարիններին
վարսակի մրիկը՝ վոչ բոլոր տեսակի վարսակներին, և առա-
սարակ բոլոր կուլտուրաների մեջ կան տեսակներ, վորոնք չեն
հիվանդանում իրենց հատուկ հիվանդությամբ, այսինքն՝ ունեն
իմունիտեա նրա դեմ:

Յեթե վորեւ բուշ չի վարակվում վորեւ հիվանդությամբ,
ուրեմն նա ունի իմունիտեա՝ դիմացկունություն՝ այդ հիվան-
դության դեմ: Բուշսերի այս հատկությունը՝ իմունիտեա՝ ժա-
ռանդական հատկություն ե և անցնում ե ծնողներից ժառան-
դին: Սակայն, սրա հետ կապված, պետք ե անել հետևել դի-
տողությունները. բույսերի իմունիտեա ունենալու հատկու-
թյունը կարող ե լինել տեսական, բայց վոչ մշական: Բուշսերը
ժամանակի ընթացքում փոխվում են, ուստի փոխվում են նաև
նրանց իմունիտեա ունենալու հատկությունը: Հին ու հայտնի
տեսակի բույսերի կողքին, փոփոխության ու բնական հիբրի-
դացման միջոցով առաջ են գալիս նոր, շատ հաճախ իմունիտեա
ունեցող բույսեր:

Բացի այս, բույսի իմունիտեա ունենալու հատկությունը
մեծ չափերով կախված ե այն միջավայրի կլիմայական, հողային
ու այլ պայմաններից, վորտեղ մշակվում ու աճում ե բույսը:
Բայց փաստ ե, վոր բուշսերի շատ տեսակներ ունեն իմունիտեա,
վորն ունի մեծ նշանակություն և պետք ե լիովին ոգտագործ-
վի մեր սոցիալիստական գյուղատնտեսության համար:

Այժմ աշքի անցկացնենք մի քանի հացարույսեր և տես-


նենք, թե ինչպես և նրանց դիմացկունությունը (իմունիտեա),
կամ անդիմացկունությունը (իմունիտեաի բացակալությունը)
մրիկի հանդեպ:

Յօրեն (Triticum).— Յօրենն ունի տարբեր տեսակներ, վո-
րոնց թիվը այժմ համարում է 16-ի: Այդ տեսակներից ամեն
մեկն ունի իր ազատեսակները, վորոնց թիվը շատ մեծ է: Ցո-
րենները վարակվում են յերկու տեսակ մրիկով՝ քարամրիկով
(Tilletia tritici և փոշեմրիկով Ustilago tritici): Առաջասարակ
ցորենների մեջ շատ քչերն են, վորոնք չեն վարակվում մրիկով:
Բայց հաճախ նկատվում է, վոր ցորենի զանազան աեսակներ
և այլատեսակներ չեն վարակվում, կամ քիչ են վարակվում
փոշեմրիկով: Մա բացատրվում է նրանով, վոր ցորենների տար-
բեր տեսակներ և այլատեսակներ ծաղկելու ժամանակ բացում
են ծաղիկները շատ կամ քիչ և ցորենների այն տեսակներն ու
այլատեսակները, վորոնք ծաղկելու ժամանակ շատ են բացում
ծաղիկները, ավելի հեշտ ու շուտ են վարակվում փոշեմրիկով
(վորովինեան փոշեմրիկի սպորները հեշտությամբ են ընկնում
ծաղիկի մեջ), իսկ նրանք, վորոնք ծաղկելու ժամանակ քիչ են,
բացում ծաղիկները, ավելի գդվար և ուշ են վարակվում (վո-
րովինեան փոշեմրիկի սպորները դժվարությամբ են ընկնում
ծաղիկի մեջ): Որինակ, ծաղկելու ժամանակ ծաղիկները քիչ են
բացում հաճարը և ցորենի մի քանի այլ տեսակները:

Թեև ցորենների մեջ կան շատ քիչ տեսակներ, վորոնք չեն վա-
րակվում մրիկով, բայց այդ տեսակների մեջ կան շատ տարտա-
սակներ, վորոնք շատ կամ քիչ գիմացկուն են մրիկի հանդեպ: Այս-
պես, որինակ՝ ըստ ամերիկյան ավագաների, գարնան ցորենի «Մար-
կիզ» կոչվող տեսակն ունի բարձր գիմացկունություն՝ փոշեմրիկի
և միջակ գիմացկունություն՝ քարամրիկի հանդեպ: «Կոտա» կոչ-
վող տեսակը չափազանց հեշտ և վարակվում փոշեմրիկով և միջակ
գիմացկունություն ունի քարամրիկի հանդեպ: Ամերիկյան տեսակ-
ներից աշքի յեն ընկնում «Ռիդիտ» «Հյուսար» 4843» և, առանձ-
նապես՝ «Հոպը», վորը գիմացկուն և և քարամրիկի, և փոշեմրիկի
հանդեպ: Ամերիկյում հիբրիդի միջոցով ստեղծած տեսակներից
են «Կանդիդ»×«Ֆուլկաֆտեր № 266313» և «Մինհարդի»×«Մինտուրդի»
№. 469», վորոնք շատ գիմացկուն են փոշեմրիկի հանդեպ:

Շատ գիմացկուն են քարամրիկի հանդեպ գերմանական տե-
սակները՝ «Հոհենմեյեր», «Փյուրստհարտցիլդ» և «Հեյլ Դիկ-
հոպ»:

Մեր խորհրդային Միության մեջ ևս կան ցորենի տեսակներ, վորոնք շատ թե քիչ դիմացկուն են մրիկի հանդեպ: Այսպես, «Թիմակ» «Սաեպնյաշկան», վորն աշնանացան տեսակ է, դիմացկուն և քարամրիկի հանդեպ: «Ֆերրուկինեռում 065», աշնանացան տեսակ է. դիմացկուն և միայն քարամրիկի հանդեպ, իսկ փոշեմրիկի հանդեպ՝ վոչ: «Հոստիանում 0237», աշնանացան տեսակ է, դիմացկուն և միայն փոշեմրիկի հանդեպ, իսկ քարամրիկի հանդեպ դիմացկուն չե: «Ուկրաինակա» աշնանացան սոսեն



Նկ. 7. Ցարեամբ «Անկրատիկա»
տեսակը. Դատ ուժեղ վարակ-
ված և տարամքիկավ յեվ քայլ՝
փոշեմքիկավ


կուն՝ փոշեմրիկի հանդեպ:

Այս սորտերից մշակվում են մեզ մոտ «Ռւկրախնկան», «Կոռպերատորկան» և «Ցեղիումը»։ Սրանցից շատ թե քիչ մեծ տարածություն ե բռնում «Ռւկրախնկան», համեմատաբար քիչ են մշակվում «Կոռպերատորկան» և «Ցեղիումը»։ Վերջին լերկուաթ մըրիկադիմացկունությունը մեր պայմաններում դեռևս, ինչպես հարկն ե, ուստումնասիրված չե, իսկ «Ռւկրախնկան» ուսումնասիրը՝

ված ե, և ստացված արդյունքները, վորոնք պարզ կլինեն գըր-քույկիս հաջորդ եջերը կարդալուց հետո, բացասականորեն են բնութագրում նրան:

Այսպիսով տեսնում ենք, վոր ցորենների մեջ կան այս-
պիսիները, վորոնք ունեն իմունիտետ՝ մըիկի հանդեպէ ինչպէս
ցույց են տվել մեր կատարած դժողովությունները, իմունիտետի
հատկությունը զափազանց ուժեղ և Տիմաֆեյկի
կոչվող ցորենի մոտ (նկ. 8): Յորենների տեսակ-
ներից բավականին ուժեղ իմունիտետ ունեն նաև
Մոնկոկումը և Պերսիկումը, վորոնցից վերջի-
նը բավականին աարածված և Հայաստանի մի
քանի շրջաններում:

Հայաստանում մշակվող ցորենները բավարար կանաչափ ուսումնասիրքած չեն մրիկով վարակվելու կամ մրիկին դիմադրելու տեսակետից Այդ ուսումնասիրությունը մենք սկսել ենք կատարել Հայաստանի բույսերի պաշտպանության կայանի հանձնարարությամբ և այժմ մեր ձեռքի տակ ունենք 1934 թվի ընթացքում կատարած գիտողությունների արդյունքը: Մենք ուսումնասիրել ենք Հայաստանի գյուղատնտեսական բնստականության գործառությունների արդյունքում առաջանալու հարաբեր տեսակի կողմանական գործությունները և Հայաստանի մշականաչափ շրջանների կողմանական ցանքները առաջանալու հարաբեր տեսակի կողմանական գործությունները:



Նկ. 8. Յօրենի Յը-
մաֆեյեվի սևակը:
Շատ զիւմացկութ և

Աղլուսակը տես հաջորդ եջու

Ահա այս թվերի հիման վրա կարելի յե կազ- գրանց բառը օտ-
մել գորոշ գաղափար՝ Հայաստանում փորձվող յեկմբիկի հանդեպ
ու մշակվող, մաքուր ու խռանուրդ ցորեն-
ների մըրիկով վարակվելու աստիճանի մասին։ Սրանցից
«Ռէկրախնկան», վորն աշխանացան ցորեն և, վարակվում և
քարամըրիկով շատ ուժեղ, իսկ փոշեմըրիկով՝ թույլ։ «Ռէկրախն-
կայի» վարակվածության աստիճանը քարամըրիկով հաճախ հա-
նում է մինչև 55%։ «Ռէկրախնկան» քարամըրիկով ուժեղ կեր-
պով վարակվում է մեր հետազոտած բոլոր շրջաններում։ Ազդ-
րանում, Ախտայում, Բայազետում, Մարտունիում և Բասրդի-
չարում։ Այս շրջաններում գիտած «Ռէկրախնկայի» ցանքերի մեջ

Հայուսամնի մի համեր շրջաններում մշտկաղ ցարենների վարակվածուր. մրիկավ

Համար	Տեսակ, խառնուրդ	Վ. ա. յ. թ.	Վարակվածության %	
			Քարամրիկ. Փոշեմրիկ	Փարամրիկ
1.	«Ռեկտինկա» . . .	Ազարան, Ալիքըուչակ . . .	16,8	—
2.	»	»	13,2	—
3.	»	»	10,0	—
4.	»	»	11,8	—
5.	»	»	43,2	—
6.	«Դարչաբառ» . . .	»	11,9	—
7.	Հաճար	»	10,8	—
8.	»	»	8,1	—
9.	«Կարմըահատ» . . .	Ազարան, պյուղ Ազարան	0,7	—
10.	«Դալգալս»	»	6,5	—
11.	«Ռեկտինկա» . . .	»	19,0	—
12.	»	Ախտա, Աղփարա	25,4	—
13.	Հաճար	Քազսի	5,9	—
14.	«Կարմըահատ» . . .	Բայչարսկու	—	3,4
15.	»	Բայչարետ, Նորագուզ . . .	1,3	—
16.	Հաճար	»	14,2	—
17.	«Կարմըահատ» . . .	»	4,4	—
18.	Հաճար	»	3,1	—
19.	Խառնուրդ	Լենինական	—	5,5

Հնաձ մշտկաղ ու փարամրիկ ցարենների վարակվածությանը մրիկերով (1936 թ.)

Համար	Տեսակ	Ցերեան		Բայցիան		Մար-		Բասար-		Արտա-	
		Ց. հ. մ.	Գ. հ. մ.								
1.	«Ռեկտինկա» . . .	0	չնչին	0,4	0	—	—	—	—	—	3,2
2.	«Սուբ-գրեկում 0,9 03»	0	0	—	—	—	—	—	—	—	—
3.	«Սուբ-մետապու-	—	—	—	—	—	—	—	—	—	—
4.	«Ռեկտինկա» . . .	0	չնչին	—	—	—	—	—	—	—	—
5.	«Դիր»	0	»	—	—	—	—	—	—	—	—
6.	«Բենզոլինդե» . . .	0	0	—	—	—	—	—	—	—	—
7.	«Սուբ-մետապու-	—	—	—	—	—	—	—	—	—	—
8.	«Ռեկտինկա» . . .	0	0	—	—	—	—	—	—	—	—
9.	«Վազիրիկա» . . .	40,0	չնչին	30,0	0	55,0	0	40,0	0	36,0	—
10.	«Սպարակահատ» . . .	—	—	0,6	0	0	0	2,0	0	9,0	—
11.	«Հոստիբանում» . . .	—	—	0	0	1,6	0	2,2	0	3,9	—
12.	«Ալթրազող թ 1» . . .	—	—	12,0	0	24,0	0	6,42	0	22,3	—
13.	«Լուտեսցեն» . . .	—	—	0	0	4,6	0	0	0	2,3	չնչին
14.	«Զարյա»	—	—	1,2	0	3,0	0	3,3	0	5,1	—
15.	«Սպարակահատ 2» . . .	—	—	1,1	0	1,1	0	0	0	2,3	—
16.	«Տաշտուն»	—	—	0	0	0	0	0	0	1,2	—
17.	«Կալեր»	—	—	0,8	0	4,3	0	7,5	0	6,3	—
18.	«Ալթրազող թ 2» . . .	—	—	15,0	0	23,3	0	19,0	0	18,0	—
19.	«Սուբ-գրեկում» . . .	—	—	0	0	0	0	0,5	0	12,0	—
20.	«Սուբ-մետապու-	—	—	0	0	0	0	0	0	3,4	—

Փոշեմրիկ չենք նկատել: Փոշեմրիկի լերկու հատ հասկ գտել ենք թերեանում կատարած փորձնական ցանքի մեջ:

Ցորենի «Արջեղիկում», «Սուբ-Գրեկում», «Սուբ-մետապատամիկում 130», «Սուբ-մետապատամիկում 154», «Թիրմանշանի», «Դիր», «Բենզոլինդե», «Վազիրիկովի» սորտերը նոր են փորձվում և ուսումնասիրվում, ուստի դժվար են բանաց բնութագիրը տալ: «Արջեղիկումը», «Սուբ-Գրեկումը» և «Սուբ-մետապատամիկում 130»-ը, ինչպես յերկում են բերած թվերից գարակվում են քարամրիկի համար գարակված հասկեր, բայց շատ սակավ: Սա առիթ և առիթ կատարելու վերաբերյալ, վորու գիման վրա կարելի է լենթաղբեր, թե այս սորտերը դիմացկուն չեն նաև փաշեմրիկի հանդեպ:

Քարամրիկով բավականին ուժեղ գարակվում և «Ալթրազող թ 1» և «Ալթրազող թ 2» ցորենը: Սրա գարակվածության աստիճանը քարամրիկով համարում են մինչև 24⁰/0-ի, իսկ փոշեմրիկով գարակված հասկեր չեն գտնվել: Զգալի չափով վարակվում են քարամրիկով նաև «Կալեր» և «Սպիտակահատ» կոչվող ցորենները: «Տաշտունն»-ըստ յերկույթին թույլ են գարակված քարամրիկով «Լուտեսցեն» և «Զարյա» սորտերն զգալի չտփազ գարակվում են քարամրիկով: Սրանցից «Լուտեսցենն»ը ըստ յերկույթին դիմացկուն չեն նաև քարամրիկի հանդեպ:

Կոլտնութեական ցանքերում քարամրիկով վարակվածության բարձր աստիճան և ցուց տալիս «Գալգալոս» կոչվող ցորենը: «Կալմրահատ» կոչվող ցորենի ցանքու ցանքերը համեմատաբար քիչ են վարակվում քարամրիկով: Բավականին շատ են գարակվում քարամրիկով նաև մեզ մոտ մշակվող համարները:

Դարի (Hordeum).—Դարին ունի 2 տեսակ, վորոնք սննեն սպիտիկ տարատեսակները: Սրանք նույնուեն, առևտի բազմացման մեջ կատարելու վարատեսակները: Սրանք նույնուեն, առևտի ապակակ նույն դիմացկունությունն ունեն քարամրիկի (Ustilago hordei) և փոշեմրիկի (Ustilago nuda) հանդեպ և այդ լերկու տեսակ մրիկիով ել վարակվում են:

Դարիներից «Մեղիկում 046» ուժեղ չի վարակվում մրիկով, թուլլ են վարակվում մրիկով նաև «Զերվոնեց» և «Մեղիկում 026» տեսակները: «Պալիխում 043» տեսակը վարակվում և քարամրիկով թուլլ, իսկ փոշեմրիկով՝ միջակ: «Կոլխիկում 010/30» տեսակը թուլլ են վարակվում և՝ քարամրիկով, և՝ փոշեմրիկով:

Հայաստանում՝ մշակվող և փորձվող գարիների դիմացկունությունը մը իկի հանդեպ կարգին ուսումնասիրված չէ. այդ ուղղությամբ 1934 թվին մենք կատարել ենք վորոշ աշխատանք՝ Ներկայում տալիս ենք մի քանի տեղեկություններ այդ հարցի մասին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ	Տ Ե Խ Ա Կ Ը	Վ Ե Խ Ա Կ Ը	Վ Ե Խ Ա Կ Ը Ձ Ե Ւ Բ Ժ Մ Ա Ն %		
			Ք Ա Ր Ա Մ	Փ Ա Զ Բ Ա Շ Ե Ր Ե Կ Ա Հ	
1	Տեղական յերկշաբք . . .	Լենինական սել. կայ.	0,4	Հայէն	
2	«Վիճեր» 163»	>	>	0,07	>
3	«Յեզրոպես» 353/133»	>	>	0,07	>
4	«Մեղքիում» 046»	>	>	Հայէն	0,3
5	«Յեղական-Դաւադ»	>	>	0,4	Հայէն
6	«Մեղքիում» 026»	>	>	0,03	0,05
7	Յերկշաբքանի գարի . . .	Ախտա, Աղսփարս . . .	3	2	
8	> >	Բայազետ, Նորագուզ	7,44	0,6	
9	> >	Հ. Մալիսան	8,7	—	
10	> >	Սարուխան	8,44	0,8	

Խաչպես ցույց են տալիս այս թվերը, և ենինականի սելեկ-
ցիսն կայանում փորձվող գարիները քիչ են վարակվում, իսկ
կոլտնտեսական ցանքերում գարիները բավականին վարակվում
են քարամը բիկով։ Դարիները, ինչպես յերեսում ե մեր կատարած
դժուդություններից, վարակվում են փոշեմբիկով համեմատաբար,
ավելի եաճախ, քան թե ցորենները։

Վարսակ (*Avena*). — Վարսակը նույնպես բավականին թուլ է դիմանում մրիկին և նույնպես վարսակովում և իրեն հատուկ քարամրիկով (*Ustilago levis*) և փոշեմրիկով (*Ustilago avenae*). Ամերիկյան տվյալների համաձայն կան մրիկին դիմացկուն վարսակի մի շարք տեսակներ, վորոնք դիմանում են և քարամրիկին և փոշեմրիկին:

Մեր Միության մեջ ևս ուսումնասիրված և հայտնի յեն վարսակի մի քան տեսակներ, զորոնք ունեն իմունիտետ՝ մըրկի դեմ: Սրանցից են. «Մոսկովյան Ա 315», տեսակը, զորն ստացվում Խօրհրդակին Միության մեջ: Սա թույլ է վարակվում քարամըրկավ և փաշեմրիկով: «Լեխովյան» տեսակը, զոր ստացված և Գեղմանիայում, նույնպես և Փինլանդական «Կյուտա» տեսակը թէ փոշեմրիկով և թէ քարամըրիկով թույլ են վարակվում:

Աշուա (առենկան)։—Նույնպես վարակվում է մըիկով, բայց պիտի ասել, վոր աշորան այս տեսակետից քիչ է ուսումնասիրված։

Կորեկտութեան պարագաներ և մրիելով և հաճախ վարակման աստիճանը լինում է շատ բարձր: Կողեկի դիմացկուն տևառակներ հայտնի չեն:

Ըեզիպտացորեն։ — Ենդիպտացորենը նույնպես վարակվում է մրիկով, բայց նրա մրիկագիմացկուն տեսակները գենեռ հայտնի չեն։

ինչպես ասինք, հացաբուլսերի մըրիկի դեմ պայքարմալու
զործում մեծ զեր ունի խաղալու մըրիկի զիմացկուն հացաբուլ-
սերի աեսակներ գտնելը, ստեղծելը և արտադրության մեջ մտցնելը:
Մեր գլուղատնտեսները, խրճիթ·լարրուատորիայի աշխատողները
և կողանատեսական ակտիվը ուշագրություն պիտի գտրձնեն այս
գործի վրա և աշխատեն գանել զանազան հիմանդրություններին,
վարոնց թվում նաև մըրիկն զիմացկուն հացաբուլսեր՝ ցորեն, զա-
րի և այլն: Ինչ խռոք, վոր, բացի հիմանդրություններին զիմացկուն
լինելուց, հաշվի պետք և առնել նաև գտած ու առանձնացրած
հացաբուլսերի բերքատվությունը, լավ վորակի հատիկ ու ալյուր
տալը, ցրտաղիմացկունությունը, չորագիմացկումություն, չթափ-
փող հատիկներ ու չպառկող ցողուն ունենալը և այլն: Գտած
ու առանձնացրած հացաբուլսի այս բոլոր հատկությունները պի-
տի փորձել ու պարզել: Ահա սրա հետ կտովված կարող և հաց
ժագել, թե ինչպես փորձել հացաբուլսի մըրիկադիմացկունությունը:


Հացարույսերի մրիկադիմացկունությունը փորձախու հասար
կա յերկու ձեւ սրանցից մեկն այս ե, յերբ կատարում են դիտա-
ղություն սովորական ցանքի վրա և պարզում մրիկի տարածման
տատիճանը նրա մեջ: Թե քարեմը դիկի և թե փոշեմը իկի համար
պետք է կատարել մեկական դիտողություն: Փոշեմը դիկի տարած-
ման տատիճանը պարզելու համար պիտի դիտողություն կառավել
հասկակալելուց մինչև ծագելը անող ժամանակաշրջանում
միջոցում, իսկ քարամը դիկի տարածումը պարզելու համար պիտի
դիտողության կատարել հացարույսերի հասունացման շրջանում:
Դիտողություն կատարելու համար պետք է ընտրել այն ցանքը,
որը պիտի դիտվի, հետո պետք է անցնել այդ ցանքի անկյուն-
վորը պիտի դիտվի, հետո պետք է անցնել այդ ցանքի անկյուն-
նազնով (տես Գիդ. 1), կամ մի անկյունից կենաքոն և յետ՝ արդ
անկյան կողքի անկյունը (տես Գիդ. 2), վորի ընթացքում, մի-
մյանցից հավասար հեռավորության վրա գտնվող տառը կտառմ
վերցնել 1 մ² (մեկ քառ. մետ.) տարածությունը և սուսպել նրա

իրա բուսած բույսերը։ Ստուգման յննթակա ցանքի մեջ շարժ-
վելու համար նախորդ պետք է աչքաչափով վորոշել, թե վորքան
կինի ցանքի անկյունագծի (Փիգ. 1), կամ անկյուն-կենտրոն-
անկյուն (Փիգ. 2) տարածության յերկարությունը։ Ցենթրոգրենք
պարզվեց, վոր պետք է անցնել մոտավորապես 300 մետր տա-
րածություն։ Այդ նշանակում է, վոր յուրաքանչյուր 30 մետր
տարածություն անցնելուց հետո, պետք է վերցնել 1 մ՝ տարա-
ծություն և ստուգել նրա վրա գտնվող բույսերը։

Ինչպես սուրգիլ.—Գետք և հաշվել բոլոր ցողունները թե
մրիկով վարակվածները և թե չվարակվածները միասին. Ապա
պետք և հաշվել միայն մրիկով վարակված ցողունները. Յերբ
10 կետում կատարված կլինեն այդպիսի հաշիվներ, պետք և
գումարել վերցրած կետերի բոլոր ցողունների թվերն առանձին
և մրիկով վարակված ցողունների թվերը՝ առանձին, փորի հետե-
լիքը կստացվեն 2 թիվ՝ բոլոր ցողունները և նրանցից՝ վա-
րակվածները. Հետո պիտի հաշվել, թե մրիկով վարակված ցո-
ղունների թիվը բոլոր ցողունների թիվի վոր առկուն և կազմում:



፩፭፻. ፪



399

Սասցված թիվը կարտահայտի ցանքի վարակվածության տարի-
եանը, պարզ պատկերացում տալով, թե վորքան և մրիկադի-
մացկուն ավյալ հացարույթը.

Բայց հացաբույսերի բնական վարակվածությունը դիտելու արդյունքը միշտ կարելի յէ լենթարկել կասկածի, վորովհետեւ ռատումասիրփող հացաբույսերի վարակված չլինելը մրիկով կորող և հետևանք լինել վոչ թէ նրա մրիկադիմացկունության, այլ պարզութես հետեւանք այն բանի, վոր սերմացուն ու հողը յեզել են մաքուր և ազատ՝ մրիկի սպորներից։ Վորպեսզի կասկած չմընա, թէ հացաբույսերի փորձվող աեսակն իրոք մրիկադիմացկուն ե, պետք և արենստական կերպով վարակել նրա սերմացուն, ցանել և վերետում ատված ձեռվ ստուգել նրա ցանքը՝ պարզելու համար, թէ վորքան և տարածված մրիկը նրա ձեռն.

Հայցաբույների արհեստական վարակումը քարամրիկով կատարվում է այլ կերպ, իսկ փոշեմբիկով՝ այլ, զորը պայմանավորվում է նրանց զարգացման, բազմացման ու տարածման յիշանակով:

Քարամբիկով արհեստական վարակում կատարելու համար պետք ե վարակել հացարույսի հատիկները և սերմացուն Սրբ համար պետք ե հավաքել մրիկներ զանազան տեսակի հացարույսներից (գալաքալոսից, հաճարից և այլն): Փորձվող հացարույսների սերմացուից պետք ե վերցնել այնքան մաս, վորքան տեսակի հացարույսների մրիկ և հավաքված, և սերմացուի ամեն մի մասը, ամեն մի բաժինը վարակել հավաքած: Մրիկի ամեն մի նմուշով առանձին-առանձին: Այժմ ինչպես կատարել վարակումը: Հավաքած մրիկի նմուշները պետք ե առանձին-առանձին տրորել և մաղել շատ բարակ մաղով: Ապա սերմացուն պետք է թաթախել մրիկի փոշու մեջ: Սրա համար սերմացուն ու մրիկի փոշին միասին պետք ե լցնել մի հարթ պատեր ունեցող ամանի մեջ և ամանը լավ ու յերկար ցնցել: Ամեն 100 գր սերմացու վարակելու համար պետք ե վերցնել 0,5—1 գր մրիկի փոշի: Ենթադրե հնարավոր չե կցուել կամ հատիկը, կամ սերմացուն, ապա կարենի յե սերմացուի 100 հատ առողջ հատիկ վարակելու համար վերցնել 2 հատիկ մրիկ (մրիկի յերկու պարփակ): Սերմացուն վարակելուց հետո պետք ե ցանել հատիկ-հատիկ և այնպես, վորքարակելուց համար պատճեն առարկաների չկոչչի և մրիկի սղորները փրայից չթափվեն:

Պրայտը և ու ի պահեստական վարակում կատարելու համար Փոշեմբիկով արհեստական վարակում կատարելու համար պետք և հավաքել այդ մըիկի փոշին և փոխադրել այդ փոշին ծաղկի վրա, բույսի ծաղկելու ժամանակ։ Սրա համար պետք և վերցնել բարակ վրձին, կամ բարակ փայտիկի ծայրին փաթաթիքները բարակ և վրձինը կամ բամբակը թաթախելով մըիկի փոշել մեջ, շատ զգույշ քսել հացաբույսի ծաղկի վարսանդի սպիթին։

Արքեստակիան վարակման արդյունքները կասկած չղետք ե
հարոցեն, յեթե վարակումը ճիշտ ու լավ է կատարված և մրի-
կի սպորների զարդացման համար յեղել են լավ պայմաններ
(աես գրքույկիս շրջ գլուխը): Յեթե այս ձևով վարակված
բույսերը չեն վարակվում մրիկով, ապա նրանց պետք է համա-
թել մրիկի գեմ իմունիտես ունեցող: Յեկ յեթե այդ ձևով փորձ-
վող հացաբույսերն ունեն տնտեսական լավ հատկանիշներ (բար-
ձը բերքատվություն, հատիկների լավ վորակի, ցողունների
չպակելու հատկություն, ցրտագիմացիկություն, չորագիմաց-
կունություն՝ սայած տեղական պայմաններին, դիմացկունություն՝
այլ հիվանդությունների հանդեպ և այլն), ապա պետք է
նրանք մտցնել արտադրության մեջ:

Հատիկի վրա գտնված մրիկի սպորտերը, չազգելով, իհարկե, սերմի ծլունակության վրա։ Այլ խոսքով, սերմացուն ախտահառնման յենթարկել միայն դրսից։

Մրիկների այս խմբին պատկանում են՝

1. Յորենիկ կարծր մըթկ —tilletia fritici
 2. Պարռ » » —ustilago hordei
 3. Աղբայիլ » » —tilletia secalis
 4. Վարսակի ծածկամըթկ —ustilago levis
 5. Վարսակի փոշեմըթկ ustilado avenae
 6. Յորենիկ ցողունային մըթկ —urocystes tritici
 7. Աղբայիլ » » — » occulta
 8. Կոռեկի մըթկ » —ustilago panici-miliaezi

Սրբաբեկ ախտահանումն տառջին խմբի մըիկների բոլոր
առաջարկների նկատմամբ կատարվում է յերեք ձևով՝ թաց կիսա-
չոր և չոր:

1. Բաց ախտահանումը

թաց ձևով ախտահանում են ցորենի և աշորայի սերմացում։
Թաց ախտահանումը հիմնականում կատարվում է միայն Փար-
մայիսի միջոցով, թեև մի ժամանակ գործածվում եր և մի տա-
կառապին պղնձաշարսպի լուծույթ, բայց չնորհիվ այն հանգաման-
քի, վոր վերջինս խիստ չափով պակասեցնում ե սերմացվի ծրա-
նակությունը, այժմ դուրս ե հանգած գործածությունից։

Թաց ախտահանման համար գործածութ են փոք-
րամատին. — Թաց ախտահանման համար գործածութ են փոք-
րամատին կամ 40% լուծույթը, վոր գործալին անունն է կրում: Գոր-
ծալինը (40%) թափանցիկ հեղուկ է, սուր, կծու հոտով, շատ
շատ գորշչանութ է, վորի համար ել միշտ պետք է պահել
ամուս միակված շներում:

Նորմալ ֆորմալինը (40%) պետք է ունենա թթու ռեակցիա, նորմալ բացառությունը ($0,2-0,4\%$)¹ սահմանափակված մըջնաթթվի ներկայությամբ

Ֆորմալինը գործարաններում են պատրաստում, վորի հա-
մար և բախտացնում են մետիլեն - սպիրտով ողի թթվածնով և,
լիթե պատրաստման ժամանակ ֆորմալինի մեջ մնում ե չոքսի-
դացած մետիլեն-սպիրտ $16^{\circ}/\text{o}$ -ից բարձր, ապա նման ֆորմալինով
ախտահանում կատարելիս սերմացվի ծլունակությունը պահպառ
և ֆորմալինը լերկար պահելուց նրա թունավոր հատկությունը չ
է Ֆորմալինը լերկար պահելուց նրա թունավոր հատկությունը չ
է կառ ֆորմալինը սառչում, նստվածք և առաջացնում:

Խչպես տեսանք, մըիկի տեսակները չափազանց շատ են և վաշտակում են մեծ թվով հացարույսեր։ Սակայն, չնայած մըիկի տեսակների բազմազանությանը, նրանց գարգացումը, սպորտների ձևելը և բույսերին վարակելն ընդհանուր առմամբ կատարվում է յերկուսից-յերեք ձևով։ Պայքարը մըիկի դեմ, անկախ նրանից, թե ինչ տեսակի յե պատկանում մըիկը, տարվում և ընդհանուր առմամբ սերմերի ախտահանումով։

Գոլության ռւնեն ախտահանման ջատ ձևեր, վորոնք սկզբ-
բանքորեն կարելի յե բաժանել միանգամայն իրարից տարբեր-
ված խմբերի: Այդ բաժանումը պայմանավորվում է նրանով, թե
յերբ և ինչպես և առաջ գալիս բուլսի վարակումը: Այս տեսա-
կետից ըստոր տեսակի մրիկները կարելի յե բաժանել յերեք
խմբի:

ՄՐԻԿՆԵՐԻ 1-ին ԽՈՒՄԲԸ

Առաջին խմբի մեջ մտնում են մըրկների այս տեսակները, վարոնք վարակում են բույսը՝ նրա ծլելու ժամանակ։ Հատիկի վրա գտնված մըրկի սպորները ծլում են հողի մեջ սերմի ծլման էլեմ միասին և մտցնելով իրենց ծիլը սերմից նոր դուրս լեկած ծլի մեջ, վարակում այս։

Այսպիսի վարակման դեպքում հատիկը ներսից միանգամայն առաջ է, քանի վոր մրիկի սպորները գտնվում են միայն սերմի մակերևույթի վրա։ Սրա համար ել պետք է կիրառել ախտա- հանման մի այսպիսի ձև, որով հնարավոր լինի վօչնչարներ

Սերմերի ախտահանձան համար սպառած կամ նստվածք ու-
նեցող ֆորմալինը հնարավոր չե գործածել, նման դեպքերում ան-
հրաժեշտ ե նստվածքը լուծել և ապա գործածել։ Ֆորմալինի
նստվածքը կտրելի է լուծել մի քանի ձևով.

1. Նստվածք ունեցող Փորմալինը տաքացնում են ջրային բազնիքում (մի վորեւ ամանով տաքացնում են ջուր և վերջինիս մեջ զնում են տին Փորմալինի շիշը, վորի նստվածքն ուղում են լուծել).

2. յերեք Ֆորմալինը սառել կամ նստվածք և առաջացրել վոչ թե աժրողջությամբ, այդ գեպքում լեռացնում են վրայի հեղուկ մասը և նստվածքին ավելացնում են տաք ջուր (3-5 անգամ ծովալով ավելի, քան ֆորմալինը), մի քանի րոպէ լավ թափահարում և ապա դնում տաք աեղ, փորից հետո նստվածքը հետզհետեւ լուծվում է։ Հետաքայում ֆորմալինը գործածելիս պետք և նկատի ունենալ, վոր նա նոսրացած և 3-5 անգամ։

3. պատրաստում են 5% սողալի լուծույթ (լվացքի սողալի) և ալդ լուծույթից 5 խոր. առ լցնում են 10 լիտր փորմալինի վրա և ապա տաքացնում ջրային բաղնիքում, մինչև նստվածքը լրիմ լուծվելը:

Թաց ախտահանման ժամանակ գործածում են ֆորմալինի
0,13% լուծույթ, զորի համար մեկ մաս 40% ֆորմալինին ավել-
ացնում են 300 մաս ջուր (1:300): Հաճախ պատահում է, զոր
ֆորմալինը 40% ից ավելի ցած և լինում. Նման դեպքերում ան-
հրաժեշտ է անդադան քիմիական լաբորատորիաներում պար-
զել ֆորմալինի ճիշտ տոկոսը և ապա վորոշել ջրի ու ֆորմալի-
նի հարաբերություր:

Պարզ է, վոր 0,13% ֆորմալինի լուծույթ պատրաստելու համար, յեթև ֆորմալինը 40% ից թույլ է, պետք է վերցնել վոչ թե առաջիկա նման 1:300, այլ ջուրն ավելի քիչ վերցնել։ Այդ նպատակի համար ներքեւ բերում ենք հատեյալ գործնական աղյուսակը, վորը ցույց է տալիս թե ֆորմալինի այս կամ այն տոկոսի դեպքում մեկ մաս ֆորմալինին քանի մաս ջուր պետք է վերցնել.

Ցործալինի %	Մեկ ժամ գործալինին պետք վերցնել ջուրը
5	37,5
10	75—
15	112,5
20	150—
25	187,5
30	225—
35	262,5
40	300—
45	387,5

Հնդկանը ապես կազմում է գործառքի հարաբերությունը կազմակերպվում են հետևյալ ֆորմուլայով. $X = \frac{300}{40} \cdot a$, վերաբեր առաջնորդվում են հետևյալ ֆորմուլայով. $X = \frac{300}{40} \cdot a$, վերաբեր առաջնորդվում են հետևյալ ֆորմալինի տոկոսն է, յեթե $a = 15\%$, այսինքն՝ առաջնորդվում է 15% և, այդ դեպքում $X = \frac{300}{40} \cdot 15 = 112,5$. Ուշադրենին՝ մեկ մաս ֆորմալինին վերցնում ենք 112,5 մաս զուր (1 : 112,5):

Ախտահանման տեսինիկան.— Սերմացում, սախքան արտա-
հանման յենթարկելը, անհրաժեշտ ե զտել սերմազտիչ մեքե-
նայով, վորով սերմի մեջ լեղած աղբի հետ հեռանում են և այն
հատիկները, վորոնք լցված են մրիկի սպորներով (մրիկի պար-
կերը) և մտում են միայն այն սպորները, վորոնք դուրս են յեկել
կերը) և մտում են միայն այն սպորների վրա. վերջիններիս ել վոչնչաց-
նում են ախտահանման միջոցով:

Դրա համար ել փայտյա տակառի կոմ տաշտի մեջ պառ-
րաստում են ախտահանման լուծույթ, վերցնելով մեկ մաս ֆոր-
մալին և 300 մաս ջուր (1 : 300). Ախտահանվող սերմացուն (30—50
կգ-ի չափ) լցնում են պարկերի կամ կիրոցների մեջ (վերջին գեպ-
քում լավ կլինի կիրոցի ներսից պարկ կարել, վորպեսզի սերմա-
ցուն կիրոցի արանքները չմանի և հեղուկի մեջ ջթափվի) ու խորա-
սություն պատրաստած լուծույթի մեջ՝ պահելով այնտեղ 3—5 րոպե։
Այս ժամանակամիջոցում սերմացուն մի քանի անգամ խառնում
են փալտե թիով և յերեսին կանգնած աղբը ձեռքով կամ փոքր մա-
զով հավաքում, 3—5 րոպե անցնելուց հետո հեղուկից գուրս են հա-
նում սերմացուն, մի քանի րոպե պահում տակառի բերնին, վար-
քամզի և ապա լցնում են հարթ և մաքուր գետնի կամ բրեղեն-
տի վրա՝ կույտի ձեռվի. Մի քանի բաժին սերմացու այս ձեռվ
Փորմալինի մեջ պահելուց և հատակի վրա լցնելուց հետո, շնորհ-
անով թողնում 2 ժամ (բրեղենտը կամ պարկերը, վորոնցով ծած-
ձնով կույտը, անհրաժեշտ և նորմապես նախորոք ախտահանել
կում են կույտը, անհրաժեշտ և նախորոք ախտահանել
ֆորմալինով):

արևի տակ չորացնելիս նա կորցնում է իր ծլունակությունը. Պետք ե հատուկ ուշադրություն դարձնել նաև չորացման աստիճանի վրա. վոչ լրիվ չորացած սերմացուն՝ մանավանդ չոր հողերում ցանելիս՝ ծածկվում ե բորբոսով և կորցնում է իր ծլունակությունը

Թաց ձեռվ ախտահանված սերմացվի հաստիկները չորացնելուց հետո ավելի մեծ են լինում, քան չախտահանված սերմերը, զբար համար ել ցանելիս անհրաժեշտ ե շաբացանի անցքերը համապատասխան չափով մեծացնել:

Թաց ախտահանումը կատարվում է ցանքից 2—3, ամենաշատը 5 որ առաջ. նշված ժամկետից շուտ կատարվելու դեպքում սերմացուն կորցնում է իր ծլունակությունը:

Մեկ տոնն սերմացուն ախտահանելու համար գործադրվում է 100 լիտր ($0,13^{\circ}/0$) լուծույթ, Մեկ կգ ($40^{\circ}/0$) ֆորմալինով կարելի յե ախտահանել 3 տոնն սերմացու:

Բացի ֆորմալիցից, կորեկի սերմացվի ախտահանման համար վերջերս խորհուրդ են տալիս գործածել նաև քլորակրի կամ սուպերֆուֆատի լուծույթ:

Քլորակրով ախտահանումը կատարելիս 100 լիտր ջրին վերցնում են 1,2 կգ քլորակրի: Լուծույթը թողնում են հանգիստ գրության մեջ 3 ժամ, վորի ընթացքում հեղուկը փայտով յերկու անգամ խառնում են: Սերմացուն ընկղմում են լուծույթի մեջ ճիշտ այնպես, ինչպես դա կատարվում է ֆորմալինով ախտահանումը կատարելու դեպքում, պահում են լուծույթում 5 րոպե, վորից հետո դուրս են հանում և անմիջապես չորացնում:

Ախտահանումը կատարվում է ցանքից 1—2 որ առաջ:

Քլորակիրն ողի մեջ կորցնում է իր հատկությունը, վորի համար ել միշտ պահում են պինդ փակված անոթներում և բացում միայն լուծույթ պատրաստելու ժամանակ: Ցեթե լուծույթը պատրաստելուց հետո շնչ մեջ ավելցուկ մնա, անմիջապես պետք է փակել:

Ախտահանման համար պատրաստած լուծույթը նույնպես յերկար չի կարելի պահել և այդ տեսակետից ել պետք ե ախտահանման աշխատանքներն արագացնել:

Սուպերֆուֆատով ախտահանումը կատարելիս 100 լիտր վերցնում են 14 կգ սուպերֆուֆատ: Հեղուկը հանգիստ դրության մեջ պահում են 30 րոպե, վորի ընթացքում խառնում են 3 անգամ: Սերմացուն հեղուկի մեջ ընկղմում են վերե ճիշ-

ճանելով և պահում 15 րոպե: դրանից հետո դուրս հանում հեղուկից և անմիջապես չորացնում:

Կորեկի ախտահանումը սուպերֆուֆատով կարելի յե կառաքել ցանքից 2—3 որ առաջ:

Ինչ թերություններ ունի թաց ախտահանումը. — Այն հանգամանքը, վոր թաց ախտահանումը հիմնականում կատարվում է ֆորմալինով, բացի սուպերֆուֆատի և քլորակրի սահմանափակ գործածությունից, կորեկի ախտահանման դեպքում՝ այդ տեսակետից ել թաց ախտահանման թերությունների մասին խոսելիս՝ աչքի տուած պետք և ունենալ ֆորմալինը վորպես ախտահանիչ:

Չնայած այն հանգամանքին, վոր ֆորմալինը մրիկի սպորների նկատմամբ ունեցած իր տոկության (թունավոր լինելու) տեսակետից բանում ե առաջին տեղը, համեմատած մեզ մտս գործածվող մյուս ախտահանիչների հետ, ինչպես պրեպարատ «ԱՅ», Դավիդովի վուշին, փարիզյան կանաչը, ջրագուրկ պղնձարձնապը և այլն, այնուամենայնիվ չնորդիվ կիրառվող ախտահանման բարդ տեխնիկայի (թաց ախտահանումը) վորոշ դեպքերում իր տեղը զիջում ե ախտահանման մյուս ձևերին (չոր ախտահանում): Համարակես ապրանքային հացանատիկ արտադրող տնտեսություններում, վորտեղ գործ ունենք հազարավոր ցենտներ սերմացվի կետ, ֆորմալինով թաց ձեի ախտահանումը, քանի վոր նա կատարված ե նաև սերմացվի չորացնելու աշխատանքի հետ, հնարավոր չի լինում կիրառել. նման դեպքում կիրառվում է չոր ախտահանումը:

Սա, իհարկե, չի նշանակում դուրս հանել առհասարակ ֆորմալինով ախտահանումը. ընդհակառակը, սերմաբուծական տնտեսություններում, սելեկցիոն կայաններում ախտահանումը հիմնառնում անպայման պետք ե կատարվի ֆորմալինով:

Թաց ախտահանման թերությունները հետևյաներն են.

1. Թաց ախտահանման տեխնիկայի ամենաբացասական կողմը պետք ե համարել սերմացվի չորացնելը: Այն հանգամանքը, վոր ախտահանումն այս դեպքում կատարվում է ցանքից 3—5 որ առաջ միայն, և վոչ շուտ, ապա այդ կարծ ժամանակամիջութեած պետք է չորացնել մեծ քանակությամբ սերմացու, իսկ յեցում պետք ե առնենք և այն, վոր առհասարակ ցանքի շրջանում (աշխատանք կամ գարնանը) յեղանակներն անձրւային են լինում, պարզ կլինի, վոր այդ աշխատանքները 3—5 որվա ընթացքում գնարդ կլինի, վոր այդ աշխատանքները չե կատարել:

2. Ֆորմալինով ախտահանված սերմացուն չորացնելուց անմիտապես հետո, յերբ ֆորմալինն արգեն դոլորշիացել են, նորից յենթակա յեւ վարակման: Բավական եւ ախտահանված սերմացուն լցնել հին պարկը (առանց պարկի ախտահանման) կամ ցանել շարքացանով, վորով ցանվել եւ մրիկով վարակված և չախտահանված սերմացու, նա խոկույն կվարակվի: Բացի դրանից, յեթե նույնիսկ ձեռք են առնված բոլոր սիջոցները, վոր սերմացուն չվարակվի պահելու և ցանելու շրջանում, ապա բավական եւ, վոր նա ցանվի մրիկով վարակված հողում, նորից կվարակվի հողում լեղած մրիկների սպորներով:

3. Քանի վոր ֆորմալինով ախտահանումը պետք եւ կատարել ցանքից 3—5 որ առաջ միայն, յերբ տնտեսության մեջ առանց այն ել բանվորական ուժի մեծ կարիք եւ զգացվում, սերմացվի ախտահանումն այդ շրջանում ավելի քան զգալի յեւ դարձնում բանվորական ուժի պակասը:

4. Անհրաժեշտ եւ հիշել և այն, վոր ֆորմալինով ախտահանված սերմացուն չի կարելի ցանել սապը հողերում. այս զեղքում զգալի չափով ընկնում եւ սերմի ծլունակությունը: Ֆորմալինով ախտահանված սերմացուն չի կարելի ցանել նաև չոր հողերում, յեթե հատիկները լրիվ չեն չորացրած:

2. Կիսաչոր ախտահանում

Կիսաչոր ձեւի ախտահանումը կիրառվում է վարակի (ծածկված կամ կարծր մրիկի ու փոշեմրիկի) և գարու (կարծր մրիկի) սերմացվի ախտահանման համար: Ինչպես գարու, նույնպես և վարսակի սերմերը ծածկված են պատյանով, և մրիկի սպորները հաճախ ձմեռում են այդ պատյանի տակը, այդ պատճառով եւ չոր ձեւի ախտահանումով սպորներին չի կարելի վոչնչացնել: Ցորենի և աշորայի սերմերը կիսաչոր ձեռով չի կարելի ախտահանել, հակառակ զեղքում սերմերի ծլունակությունն զգալի չափով կընկնի:

Կիսաչոր ախտահանումը նույնպես կատարում են ֆորմալինով, բայց այս զեղքում գործածում են քիչ քանակությամբ անհամեմատ ավելի կոնցենտրիկ ($0,5\%$) լուծույթ: Այս զեղքում վերցնում են մեկ մաս 40% ֆորմալինի 80 մաս ջուր:

Յեթե ստացված ֆորմալինն ավելի թույլ կոնցենտրացիա ունի, այդ զեղքում ջրի և ֆորմալինի հարաբերությունը վորչիս պետք եւ առաջնորդվել հետեւյալ ազյուսակով:

Տիմա ֆորմալինի համար Ֆորմալինի ջուր պետք եւ գերցնել հետևյալ չափով	%
5	-10
10	-20
15	-30
20	-40
25	-50
30	-60
35	-65
40	80
45	90

Ախտահանման տեխնիկան: — Կիսաչոր ձեւի ախտահանման դեպքում սերմացուն վոչ թե վարով ժամանակ ընկղմում են լուծույթի մեջ, ինչպես դա կատարվում եր թաց ախտահանման ժամանակի, այլ վառում են անմիջապես գետնի կամ բրեգենտի վրա (վերականգնության պետք եւ նախարար թրջված լինի ֆորմալինի լուծույթով $1 : 300$): Սերմացուն այս զեղքում վառում են 30 սմ հաստություն 1 : 300): Սերմացուն այս զեղքում վառում են 30 սմ հաստություն $1 : 300$: Սերմացուն չափում լրիվ կամ սրակիչ ապարատնեցող յերկարավուն շերտով և ջրցանով կամ սրակիչ ապարատով շաղ են տալիս սերմացվի վրա ֆորմալինի լուծույթը և միաժամանակ վայատե թիերով տնընդհատ խառնում, վորպեսզի սերմացուն ըստ հնարավորություն հավասարաչափ թրջվի լուծույթով: Մացունը հետո թրջված կույտը ծածկում են բրեգենտով կամ պարագաներով (վերջններու պետք եւ անպայման թրջված լինեն ֆորմակերով ($1 : 300$) և թողնում չորս ժամ: Այս ժամանակին լուծույթով $1 : 300$ ֆորմալինը հետադեւտե գոլորշիացման յենթարկվելով կամիջոցում ֆորմալինը հետադեւտե գոլորշիացման յենթարկվելով թափանցում եւ սերմի պատյանի մեջ և վոչնչացնում և այնտեղ դաշտաված մրիկի սպորներին:

Սերմացուն այս ձեռով ժամ պահելուց հետո բաց են սերմացում, մի քանի անգամ խառնում, վորից հետո առանց չորացնելու կարելի յեւ ցանել:

Կիսաչոր ձեւի ախտահանումը թույլ եւ արվում կատարելու ցանքից 1—2 որ առաջ:

Մեկ տոնն վարսակի սերմացվի ախտահանման համար (կիսաչոր յեղանակով) պահանջվում եւ 30 լիտր ($0,5\%$) ֆորմալինի ստչոր յեղանակով) պահանջվում եւ արված կամար՝ 15 լիտր: Այլ լուծույթ, իսկ մեկ տօնն գարու սերմացվի համար՝ 15 լիտր: Այլ

Խոսքով ասած՝ մեկ կը 40⁰ անոց գործալինով կարելի յէ ակահանել 24 ցենտ. վարսակ կամ 54 ցենտ. դարի:

Կիբաչոր ձեռվի ախտահանած սերմացուն նույնպես յենթակա յե հետագա վարակման, այդ պատճառով ել սերմացվի համար հատկացը պարկերը և շարքացանը նախորդ պետք ե ախտա- հանել ֆորմալինի լուծույթով, ինչպես դա կատարվում եր թաց ախտահանման ժամանակ:

Թաց կամ կիսաչոր ախտահանման համար գործադրում են մի շաբթ արտասահմանյան պրեպարատներ, ինչպիսին՝ են Գերման, Ռւսպուլին (սանդիկ պարունակողներ). թեև այս պրեպարատները շատ լավ են ազդում ինչպես սպորտների վոչնչացման վրա, նույնպես և ծլաւնակության, բայց քանի վոր այդ պրեպարատները ներմուծվում են արտասահման ից, թանգարքեաք են, այդ պատճառով ել մեղ մոռ ԽՍՀՄ-ում գոեթե չեն ուստաձևում:

Վարսակի և գարու ախտահանման համար յերբեմն կիրառված են նույնաց ախտահանումներ:

3. ԶԵՐ ախտահանում

Հոր ախտահանման մեթոդը հիմնված է հետեւյալ սկզբունքի
վրա: Գործադրվող ախտահանիչ նյութն այս գեպքում փոշու զատ
բարակ շերտով պատում և հատիկի մակերևույթը և նրա վրա
գտնված մրիկի սպոռները: Ախտահանված սերմացութ ծլունակու-
թյունը չի պահասում, իսկ հատիկի վրա գտնված մրիկի սպոռ-
ներն ախտահանիչների ազդեցության տակ կամ բալրովին չեն
ծլում, կամ թե ծլելու գեպքում եկ անընդունակ են գառնում վա-
րակելու հատիկից դուրս յեկած ծիլը և դրանով բռնյան մրիկից
պաշտպանում են:

Զոր ախտահանումը, համեմատած թաց ախտահանման հետ,
ունի մի շարք առավելություններ նորի հետեւ հետու:

1. Զոր ախտահանման ժամանակ սերմացվի լվանալու և չորացնելու կարիք չի լինում, զորի շնորհիվ ախտահանման աջ- խառնագները չափազանց հեշտանում են, վորպիսի հանգամանքը թույլ և տալիս կարճ ժամանակամիջոցներ ախտահանել մեծ քա- նակությամբ սերմացու:

2. Զոր ախտահանումը կարելի յե կատարել ցանքից շառապաջ (1-5 ամիս) վորպիկսի հանդամանքը ցանքի ժամանակ աշխատանքի կուտակում առաջ չի սկսում:

3. Ընորհիվ այն հանգամանքի, որը չոր ձեռք ակտուահանեց:

գեպօռմ ախտահանիչ նյութը մնում է հատիկների վրա, սեղմացուն մինչև ծլելը պաշտպանված է հետազորում մրիկով վարակվելուց.

4. Զոր ձևով տիստահանած սերմացուն պահեստում քիչ ե
յենթարկվում փաստուների աղեցության, բացի դրանից, հո-
ղում չի վարակվում զանազան սպորտֆիտներով, վորի հետեան-
քով ցանքը կարելի յե շուտ կատարելու

զոր ախտահանման համար գործեն ածվում մի շաբք ախտա-
հանիչներ, վորոնց մասին բերում ենք համապատասխան տեղե-
կություններ:

1. Պետական «ԱՅ».—Այս պրեզարտը գտնել և ֆիտոպատոլոգ Ս. Ի. Բորհարդը, վորի համար ել «ԱՅ» անունն և կրում (1927—1928 թ.):

Պրեպարատը պատրաստում են ինչպես գործարանում (Մոսկ-
վայում), այնպես և տեղերում՝ անայնագործական ձևով:

Այս ձեռվագ պարբռատած ԱՅ պարբռնակում և 36% լազուք
 $2\text{Cu CO}_3 \cdot \text{Cu}(\text{OH})_2$ 56% դիմում ($\text{CaSO}_4 \cdot 2\text{H}_2\text{O}$) և 8% կապիճ
 (CaCO_3) :

Մեկ տոնն պղնձարշասպից ստացվելու և 1,248 տոնն ԱՅ,
գորով կարելի յեւ ախտահանել 832 տոնն ցորեն:


АБ-ի առավել լուծիյունները.
 1. հիգրոսկոպիկ չե, 2. չի լուծվում ջրում, 3. չի փշացնում
 մեքենայի մետաղյա մասերը, 4. սերմացվի ծրունակությունը չի
